



Հայաստանի Հանրապետություն



**ՄԱԿ-Ի ՉԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

**Ծրագրային փաստաթուղթ  
Կլիմայի կանաչ հիմնադրամի (ԿԿՀ) կողմից ֆինանսավորվող  
Ազգային մակարդակով իրականացվող ծրագրեր**

Ծրագրի անվանումը՝ Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում	
<b>Երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն</b>	
<b>Իրականացնող գործընկեր՝</b> ՀՀ բնապահպանության նախարարություն	<b>Կառավարման մեխանիզմը:</b> Ազգային իրականացման ձևաչափ (ԱԻՁ)
<p><b>ՄԱԿԶԱԾ արդյունք 7/Ազգային ծրագրի արդյունք 4 (13).</b> Մինչև 2020թ. ներդրվել և կիրառվում են կայուն զարգացման սկզբունքները, շրջակա միջավայրի կայունության, դիմակայունության ձևավորման, կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման, ինչպես նաև կանաչ տնտեսության լավագույն գործելակերպերը:</p> <p><b>Ազգային ծրագրի գործողությունների պլանի ակնկալվող արդյունք. 4.4.</b> Ցածրաձխաձնային և կանաչ տնտեսությունն առաջնային են դառնում կառավարության համար, սատարվում են համապատասխան կարգավորող դաշտով և գործողություններով:</p>	
<b>ՄԱԶԾ սոցիալական և բնապահպանական հետազոտության կատեգորիան՝</b> ցածր	<b>Յուրաքանչյուր ծրագրի արդյունքի համար ՄԱԶԾ գենդերային մարկերը = 2</b>
<b>Ծրագրի ՆՀ</b> 00098348	<b>Atlas արդյունքի ՆՀ՝</b> /00101711
<b>ՄԱԶԾ-ԳԷՖ ՆՀ՝</b> 5684	<b>ԿԿՀ ՆՀ՝</b> FP010
<b>Նախատեսվող սկիզբը՝</b> հուլիս 2017թ. <b>ԿԿՀ մեկնարկային ամսաթիվը՝</b> 07 հունիսի 2017թ.	<b>Նախատեսվող ավարտը՝</b> հունիս 2023թ.
<b>ՏԾԳՀ ամսաթիվը՝</b> Ծրագիրը ՄԱԶԾ Տեղական ծրագրերի գնահատման հանձնաժողովի կողմից (ՏԾԳՀ) հաստատվել է 2015թ. հուլիսի 27-ին և վերջնական տեսքով հաստատվել է XX հունիսի 2017թ.	
<b>Ծրագրի համառոտ նկարագրությունը.</b> Ռիսկերի նվազեցման միջամտությունների ինտեգրված հավաքակազմի կիրառման միջոցով այս Ծրագիրը միտված է սիստեմատիկաբար նվազեցնել ջերմոցային գազերի արտանետումները Հայաստանում գոյություն ունեցող շենքերի ֆոնդից և, այդ միջոցով, նվազեցնել ջերմոցային գազերի (ՋԳ)	

արտանետումները և ապահովել կայուն զարգացման օգուտները: Այս Ծրագիրը, որն ընդգրկում է ինչպես հասարակական, այնպես էլ բնակելի շենքերը, կենտրոնանում է շուկայի խոչընդոտները հաղթահարելու միջոցով ԷԱ արդիականացմանն ուղղված ներդրումների համար բարենպաստ շուկայական միջավայրի և մասշտաբավորման ընդունակ բիզնես մոդելի ստեղծման վրա: Շենքերի ԷԱ վերակառուցման առաջ ծառայած խոչընդոտները հաղթահարվում են քաղաքականության և ֆինանսական ռիսկերի նվազեցման գործիքների համադրություն և շուկայի առանցքային խաղացողների համար նպատակային ֆինանսական արտոնությունների միջոցով: Յուրաքանչյուր կոնկրետ ռիսկի ոլորտի խնդիրները լուծելու համար Ծրագիրը կառուցված է չորս բաղադրիչներից. շենքերի ոլորտի մոնիտորինգ, հաշվետվություն և ստուգում (ՄՀՍ) և գիտելիքների կառավարում, քաղաքականության ռիսկերի նվազեցում, ֆինանսական ռիսկերի նվազեցում և ֆինանսական արտոնություններ: Խոչընդոտները սիստեմատիկաբար թիրախավորելու միջոցով Ծրագիրը էապես նվազեցնելու է շենքերի ԷԱ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի պատկերը և խրախուսելու է մասնավոր հատվածի ներդրումները՝ այդպիսով մասշտաբավորելու է Հայաստանում շենքերի ԷԱ արդիականացմանն ուղղվող ներդրումները: Ծրագիրը կհանգեցնի էներգիայի էական խնայողությանը և դրա արդյունքում ՋԳ արտանետումների կրճատմանը (ներդրումների շուրջ 20 տարվա կյանքի ընթացքում՝ 5.1-ից մինչև 5.4 մլն տ CO<sub>2</sub>), «կանաչ» աշխատատեղերի ստեղծմանը և աղքատության կրճատմանը: Ի լրումն Կլիմայի կանաչ հիմնադրամի կողմից ֆինանսավորմանը, Ծրագիրը կխթանի նաև մասնավոր և հանրային հատվածի կողմից մոտավորապես 110 մլն ԱՄՆ դոլարի ֆինանսավորումը: Ծրագիրը՝ նախագծման, իրականացման, մոնիտորինգի և գնահատման մեջ տղամարդկանց և կանանց հավասար մասնակցության բարենպաստ ներառական մեխանիզմների կայացման միջոցով՝ հաշվի առնելով գնահատման և որոշումների կայացման նրանց բազմառեսակ փորձը, կապահովի գենդերային հավասարությունը, և նրանց՝ ռեսուրսների և կարողությունների զարգացման հասանելիության ոչ խտրական հնարավորություններ կընձեռի:

<b>ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԼԱՆ (ԱՄՆ դոլար)</b>	
ԿԿՀ դրամաշնորհ	20,000,000
ՄԱԶԾ միջոցներ	420,000
ՄԱԶԾ բնեղեն	1,000,000
<b>(1) ՄԱԶԾ կողմից կառավարվող ընդհանուր բյուջեն</b>	<b>21,420,000</b>
<b>ԶՈՒԳԱՇԵՌ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ (ամբողջ այլ համաֆինանսավորումը (դրամական կամ բնեղեն))</b>	
Երևանի քաղաքապետարան (զուգահեռ դրամական ֆինանսավորում)	8,000,000
Կառավարություն (բնեղեն)	400,000
Եվրոպական ներդրումային բանկ (ԵՆԲ)	86,250,000
<b>(2) Ընդամենը համաֆինանսավորում</b>	<b>94,650,000</b>
<b>(3) Ծրագրի ընդամենը ընդհանուր ֆինանսավորում (1)+(2)</b>	<b>116,070,000</b>

<b>ՄՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>		
<b>Ստորագրություն՝</b> Արծվիկ Մինասյան Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարար	<b>Հաստատված է՝</b> <b>Կառավարության</b> <b>կողմից</b>	<b>օր/ամիս/տարի</b>
<b>Ստորագրություն՝</b> Արծվիկ Մինասյան Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարար	<b>Հաստատված է՝</b> <b>Իրագործող</b> <b>մարմնի կողմից</b>	<b>օր/ամիս/տարի</b>
<b>Ստորագրություն:</b> Բրեդլի Բուլետո Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող, ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչ	<b>Հաստատված է՝</b> <b>ՄԱԶԾ կողմից</b>	<b>օր/ամիս/տարի</b>

# Բովանդակություն

1. Զարգացման մարտահրավերները .....	8
1.1. Ռազմավարական համատեքստը և գլոբալ նշանակությունը .....	8
1.2. Խոչընդոտները, հիմնապատճառները և սպառնալիքները հաղթահարելու ներկայիս պետական քաղաքականությունը.....	12
2. Ռազմավարություն.....	18
2.1. Ծրագրի նպատակը.....	18
2.2. Ծրագրի բաղադրիչները, ձեռքբերումները և արդյունքները .....	18
2.3. Ծրագրի ֆինանսական տարրերը .....	25
3. Արդյունքներ եվ համագործակցություն .....	28
3.1. Ակնկալվող արդյունքները .....	28
3.2. Համագործակցություն և շահագրգիռ կողմերի ներգրավվածություն.....	29
3.3. Գիտելիքներ .....	33
4. Տեխնիկատնտեսական հիմնավորում .....	34
4.1. Տնտեսական շահավետություն և արդյունավետություն.....	34
4.2. Ռիսկերի կառավարում .....	35
4.3. Սոցիալական և բնապահպանական երաշխիքներ.....	35
4.4. Կայունություն և մասշտաբավորում.....	36
4.5. Տնտեսագիտական և/կամ ֆինանսական վերլուծություն.....	36
5. Ծրագրի արդյունքների շրջանակը .....	38
6. Կառավարման մեխանիզմը .....	49
7. Մոնիտորինգի և գնահատման պլան .....	53
8. Ֆինանսական պլանավորում և կառավարում .....	55
9. Ընդհանուր բյուջեն և աշխատանքային պլանը.....	58

# Հապավումների ցանկ

ԾՏՀ	Ծրագրի տարեկան հաշվետվություն
ՏԱՊ	Տարեկան աշխատանքային պլան
ՄՁՄ	Մաքուր զարգացման մեխանիզմ
ԱՊՀ	Անկախ պետությունների համագործակցություն
ԱԾԳՊ	Ազգային ծրագրի գործողությունների պլան
ԷԱ	Էներգաարդյունավետ / Էներգաարդյունավետություն
ԱԵԿԱ	Արևելյան Եվրոպա և Կենտրոնական Ասիա
ԵՆԲ	Եվրոպական ներդրումային բանկ
ԷԿՏՀ	Էներգիայի կառավարման տեղեկատվական համակարգ (EMIS)
ԵՀԲ	Եվրոպական հարևանության քաղաքականություն
ՇԷՑԴ	(ԵՄ դիրեկտիվներ) Շենքերի էներգետիկ ցուցանիշներ
ԷԱՊ	Էներգաարդյունավետության պայմանագիր
ԷԾՄԸ	Էներգետիկ ծառայություններ մատուցող ընկերություն
ԵՄ	Եվրամիություն
ՖԻ	Ֆինանսական ինստիտուտ
ԿԿՀ	Կանաչ կլիմայի հիմնադրամ
ԳԷՖ	Գլոբալ էկոլոգիական ֆոնդ
ՋԳ	Ջերմոցային գազեր
ՆՄԿՓ	Կանխիկ փոխանցման ներդաշնակեցված մոտեցում (HACT)
ՀՀ ԷԵԲՊՆ	ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն
ՀՏ	Համատիրություն /տնատերերի միություն/
ԲՇԸ	Բնակչահագործման ընկերություն
ՄՖԿ	Միջազգային ֆինանսական կորպորացիա
ԱՄՍՆՆ	Ազգային մակարդակով սահմանված նախատեսվող ներդրումներ (INDC)
ՄՄԿ -	Ստանդարտացման միջազգային կազմակերպություն (ISO)
ՄևԳ	Մոնիտորինգ և գնահատում
ԲՆ	Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն
ՄՀՍ	մոնիտորինգ, հաշվետվություն և ստուգում
ՄԺԳ	Միջնաժամկետ գնահատում
ՄՎտԺ	Մեզավատտ-ժամ
ԱՀՀՄԳ	Ազգային համատեքստին համապատասխան մեղմման գործողություններ
ԷԱԳԱԾ	Էներգաարդյունավետություն գործողությունների ազգային ծրագիր
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՈւԻՁ	Ուղղակի իրականացման ձևաչափ
ՏՀՁԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
Շ և Պ	Շահագործում և պահպանում
ԾԿ	Ծրագրի կառավարիչ
ԾԿԹ	Ծրագրի կառավարման թիմ
ԾՀ	Ծրագրի հաշվետվություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՏՎտԺ	Տերավատտ-ժամ
ՏՀԳ	Տարածաշրջանային համակարգող գրասենյակ
ԼԱՄ	Լիազորված ազգային մարմին
ԿԷՆԿՊ	Կայուն էներգետիկայում ներդրումներ կատարելու պատրաստվածություն
ՀՎԷՀ	Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողություն հիմնադրամ
ՀԱՍՀ	Հիմնական աջակցության ստանդարտ համաձայնագիր
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկություն
ՄԱՁԾ	ՄԱԿ-ի Ջարգացման ծրագիր
ՄԱԿ-ի ԿՓՇԿ	ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիա
ԱՄՆ ՄՁԳ	ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն
ԱԱՀ	Ավելացված արժեքի հարկ
ՀԲ	Համաշխարհային բանկ

# ԱՄՓՈՓԱԳԻՐ

Կլիմայի կանաչ հիմնադրամի (ԿԿՀ) կողմից ֆինանսավորվող «Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում» Ծրագիրը միտված է սիստեմատիկաբար նվազեցնել ջերմոցային գազերի արտանետումները Հայաստանում գոյություն ունեցող շենքերի ֆոնդից և այդ միջոցով, ապահովել կայուն զարգացման օգուտները: Դա իրականացնելու համար Ծրագիրը կենտրոնանում է ԷԱ արդիականացմանն ուղղված ներդրումների ընդհանուր ռիսկերի նվազեցման վրա շենքերում, որպես ՀՀ-ում էներգիայի հիմնական սպառող սեկտոր: ԷԱ արդիականացմանն ուղղված ներդրումների համար բարենպաստ շուկայական միջավայրի և մասշտաբավորման ընդունակ բիզնես մոդելի ստեղծումը հանգեցնելու է էներգիայի էական խնայողությանը, ՋԳ արտանետումների կրճատմանը, կանաչ աշխատատեղերի ստեղծմանը և աղքատության կրճատմանը: Ծրագիրը շենքերի ԷԱ վերակառուցման առաջ ծառայած շուկայական խոչընդոտները հաղթահարելու է քաղաքականության և ֆինանսական ռիսկերի նվազեցման գործիքների համադրության և շուկայի առանցքային խաղացողների համար նպատակային ֆինանսական արտոնությունների միջոցով: Քաղաքականության, ֆինանսական, շուկայական, տեխնիկական և կարողությունների խոչընդոտները թիրախավորելու միջոցով Ծրագիրը էապես նվազեցնելու է շենքերի ԷԱ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի պատկերը և խրախուսելու է մասնավոր հատվածի ներդրումները՝ այդպիսով մասշտաբավորելու է երկրում շենքերի ԷԱ արդիականացմանն ուղղվող ներդրումները: Ռիսկի յուրաքանչյուր կոնկրետ ոլորտի խնդիրները լուծելու մոտեցումները ներառված են Ծրագրի չորս բաղադրիչներում. շենքերի ոլորտի մոնիտորինգ, հաշվետվություն և ստուգում (ՄՀՍ) և գիտելիքների կառավարում, քաղաքականության ռիսկերի նվազեցում, ֆինանսական ռիսկերի նվազեցում և ֆինանսական արտոնություններ:

Նախ, Ծրագիրը կաջակցի շենքերի ոլորտում ՄՀՍ-ի շրջանակի, այդ թվում՝ էներգիայի կառավարման տեղեկատվական համակարգերի ստեղծման ՄԱԶԾ-ի փորձի հիման վրա կազմված ուղեցույցների և մեթոդաբանության մշակմանը: Շահառուների շրջանում տեղեկատվության ավելի լավ տարածումը և քաղված դասերի տրամադրումը քաջալերելու միջոցով Ծրագիրը կաջակցի նաև Հայաստանում գիտելիքների ձեռքբերման և կոլեկտիվ ուսուցման գործընթացներին:

Քաղաքականություն ռիսկերի նվազեցում. երկրորդ բաղադրիչի շրջանակներում Ծրագիրը կաջակցի կենտրոնական և տեղական կառավարման մարմինների կողմից ԷԱ արդիականացմանը նպաստող քաղաքականության ծրագրեր ընդունել և իրականացնել: Առևտրային վարկատուների կողմից ԷԱ արդիականացմանն ուղղված ֆինանսավորման ներդրումային ռիսկերը լուծվելու են քաղաքականության ռիսկերի նվազեցման գործիքների միջոցով, որոնք են՝ արդիականացվող շենքերի համար ԷԱ ստանդարտների և ԷԱ պարտադիր չափորոշիչների արդիականացումը և կիրարկումը, դրանց առնչվող շինարարական նորմերի և ստանդարտների մոնիտորինգը և կիրարկումը, ԷԱ արդիականացում ձեռնարկելու նպատակով բոլոր բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին ֆունկցիոնալ մոդելների և կանոնների տրամադրման համար համապատասխան ենթաօրենսդրական ակտերի մշակումը, ներդրումը և կիրարկումը, օրենսդրական դաշտի իրականացումը և կատարելագործումը: Դա կօգնի տարբեր տիպի շենքերի համար ԷԱ արդիականացման կառավարմանը, և ԷԱ արդիականացմանն ուղղվող ներդրումներին առնչվող բարդ հարցերում կոլեկտիվ որոշումների կայացման գործում բնակիչներին և ընդհանուր բաժնային սեփականությամբ շենքերին աջակցությունը: Ծրագիրը նաև տեխնիկական աջակցություն կցուցաբերի շուկայի ընտրված խաղացողներին, օրինակ՝ շենքի սեփականատերերին, կառավարիչներին, սեփականատերերի միություններին և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ տեխնիկապես և

Ֆինանսապես իրագործելի էԱ արդիականացման ծրագրերի բացահայտման և մշակման գործում:

ԵՆԲ-ի, տեղական բանկերի և այլ համապատասխան ազգային և միջազգային Ֆինանսական ինստիտուտների հետ համագործակցությամբ ֆինանսական ռիսկերի նվազեցման բաղադրիչը կապահովի էԱ արդիականացման համար մատչելի կապիտալի հասանելիությունը: Կլինեն ռիսկերի նվազեցման գործիքների տարբեր ձևեր, այդ թվում՝ ֆինանսական ինստիտուտների կողմից տրամադրվող վարկային գծեր և/կամ վարկային երաշխիքներ՝ տեղական առևտրային բանկերին խրախուսելու մասնավոր ԷԾՄԸ-ներին և/կամ շենքի սեփականատերերի վարկավորումը: Իրենց վարկային պրոդուկտը մշակելու, ներդրումները գնահատելու և ծրագրերի գործիքները զարգացնելու համար տեղական առևտրային բանկերին տեխնիկական աջակցություն կառաջարկվի: Շենքերի էԱ արդիականացման ֆինանսավորման փաթեթների առկայության մասին տեղեկությունները կտարածվեն շահառուների շրջանակում:

Նպատակային ֆինանսական արտոնությունները 4-րդ բաղադրիչի միջոցով կտրամադրվեն և կառաջարկվեն շենքերի/բնակարանների սեփականատերերին կամ այդ հաճախորդներին սպասարկող ԷԾՄԸ-ներին՝ ապահովելով, որ առավել խոցելի տնային տնտեսությունները կարողանան իրենց թույլ տալ էԱ արդիականացման ծախսեր կատարել: Հայաստանի քաղաքային բնակավայրերում տիրող համատարած աղքատության և գերակշռող անհավասարության իրավիճակի պատճառով տնային տնտեսությունների առնվազն մեկ հինգերորդը չի կարողանում իրեն թույլ տալ ողջամիտ գնով տաքացնել տները և չի կարող իրեն թույլ տալ միանգամից կատարել էԱ արդիականացման ծախսեր: Մատչելիության այդ բացը լրացնելու և էԱ արդիականացման պահանջարկը խթանելու նպատակով խոցելի խմբերի համար ուղղակի նպատակային արտոնություններ են անհրաժեշտ: Դրամաշնորհները կաջակցեն աղքատ ու խոցելի տնային տնտեսություններին հասնելու բարելավված ջերմային հարմարավետությանը և խնայել ծախսերը /էներգիան:

Ընդհանուր առմամբ, ՄԱԶԾ Ծրագիրը համապատասխանեցված է ԿԿՀ ներդրումային Ծրագրի շրջանակին, որը շեշտը դնում է գոյություն ունեցող ենթակառուցվածքների վերազինման վրա և աջակցում է քաղաքային համակարգերի ամրապնդման ջանքերին: Ծրագիրը հենվում է ՄԱԶԾ-ի մեծ փորձի վրա և կոչված է աջակցելու Հայաստանի Հանրապետության կառավարությանը և ներգրավելու մասնավոր հատվածին ջեռուցման, շենքերի և լուսավորության ոլորտներում էԱ խոչընդոտները հաջողությամբ նվազեցնելու գործում: Հայաստանում էԱ արդիականացման ներդրումների համար Ծրագիրը բարենպաստ շուկայական միջավայր և մասշտաբավորման ընդունակ բիզնես մոդել կստեղծի, որը ներդրումների շուրջ 20 տարվա կյանքի ընթացքում կհանգեցնի արտանետումների 5.1-ից մինչև 5.4 մլն տ CO<sub>2</sub> ՋԳ կրճատմանը: Ի լրումն ԿԿՀ կողմից ֆինանսավորմանը, Ծրագիրը կխթանի նաև մասնավոր և հանրային հատվածի կողմից մոտավորապես 110 մլն ԱՄՆ դոլարի ֆինանսավորումը:

Ծրագիրը՝ առաջնահերթությունը տալով գենդերային հավասարությանը, ապահովելու է նախագծման, իրականացման, մոնիտորինգի և գնահատման միջոցով տղամարդկանց և կանանց հավասար՝ որպես փորձագետներ կամ շահառուներ, մասնակցության ներառական մեխանիզմների կայացմանը Ծրագրի բոլոր չորս արդյունքներում, տեղեկացնելու է գնահատման և որոշումների կայացման մասին, ռեսուրսների և կարողությունների զարգացման հասանելիության ոչ խտրական հնարավորություններ է ընձեռնելու: ՄԱԶԾ Հայաստանի գենդերային հավասարության ռազմավարությանը համահունչ, Ծրագիրը գենդերային տարանջատված տվյալների շրջանակ է կիրառելու և ձգտելու է հասնել կանանց մասնակցության առնվազն 30%-ին: Բոլոր արդյունքներում Ծրագրի գենդերային մարկերը GEN2 է, որը միտված է հասնելու գենդերային հավասարության նշանակալի ձեռքբերումների:

# 1. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

## 1.1. Ռազմավարական համատեքստը և գլոբալ նշանակությունը

1970թ. ի վեր շենքերից արտանետվող ջերմոցային գազերը (ՋԳ) ավելի քան կրկնապատկվել են և ներկայումս հասնում են ամբողջ ՋԳ գլոբալ արտանետումների 19%-ին: Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի (ԱԵԿԱ), ներառյալ Հայաստանը, ցածր միջին եկամուտով երկրներում շենքերի ոլորտից արտանետումները հասնում են բոլոր ՏՀԶԿ անդամ չհանդիսացող երկրներից ՋԳ արտանետումների համարյա 40%-ին: Ելնելով այն հանգամանքից, որ այդ երկրները նաև գտնվում են աշխարհում մեկ շնչի հաշվով՝ շենքերում էներգիայի սպառման ամենաբարձր մակարդակներում, ինչպես նաև հաշվի առնելով այդ երկրներում տնտեսական պայմանների բարելավման միտումները՝ դրանք հետագա աճի ներուժ ունեն, որն այդ երկրներին Կլիմայի կանաչ հիմնադրամի (ԿԿՀ) կողմից օժանդակվող ԷԱ արդիականացումն արագացնող ծրագրերի լավ թեկնածուի է վերածում:

Համաշխարհային մասշտաբով շենքերի ոլորտը արտանետումների աճի դադարեցման ամենամեծ ներուժն ունի: Շենքերում էներգիայի օգտագործման արդյունավետության բարձրացումից բխող մեղմման գնահատված պոտենցիալը կազմում է 3.3-ից մինչև 4 ԳտCO<sub>2</sub><sup>համ</sup>/տարի: Եկամտաբերության լավագույն փորձն ու տեխնոլոգիաները, օրինակ՝ խորը ԷԱ արդիականացումը, դրանց լայն կիրառության դեպքում կարող են մինչև 50-70% էներգախնայողության հանգեցնել:

Հայաստանում շենքերի ոլորտը էներգիայի ամենամեծ սպառողներից մեկն է: Հայաստանում շենքերի մեծ մասը կառուցվել է խորհրդային տարիներին (35-60 տարի առաջ), երբ հիմնականում անտեսվում էին ԷԱ պահանջները: Ըստ ՄԱԿ-ի ԿՓՇԿ ներքո Հայաստանի կողմից ներկայացված ՋԳ կադաստրի 2010թ. Ազգային հաղորդագրության, առաջնային էներգետիկ ռեսուրսների գրեթե 28% -ը սպառվում է շենքերի կողմից՝ հիմնականում բնակելի հատվածում, որը կազմում է ջերմոցային գազերի ընդհանուր արտանետումների 20%-ը:

Երկար ջեռուցման սեզոնով և -5°C ձմեռային միջին ջերմաստիճանով և -42°C բացարձակ նվազագույն ջերմաստիճանով արտահայտված Հայաստանի ընդգծված մայրցամաքային կլիմայի պայմաններում՝ շենքերի ոլորտում էներգիայի սպառումը և ջերմոցային գազերի արտանետումները Հայաստանում հիմնականում կապված են տարածքի ջեռուցման հետ:

Հայաստանում նոր բնակելի շենքերի ջեռուցման համար ջերմային էներգիայի միջին սպառումը կազմում է տարեկան 185 կՎտժ/մ<sup>2</sup>, իսկ հին շենքերում դրա կարիքը զգալիորեն ավելի բարձր է:<sup>1</sup> Հայաստանում զգալի էներգախնայողության ներուժով օժտված շենքերի ենթախմբին են պատկանում պանելային շենքերը, որոնց քանակը մոտ 4300 է: Զուտ այդ տիպի շենքերում ջերմային արդիականացման արդյունքում ստացվող էներգախնայողության պոտենցիալը տարեկան ավելի քան 1,25 ՏՎտժ է, իսկ ՋԳ նվազեցման պոտենցիալը՝ տարեկան 250 000 տ CO<sub>2</sub>, և տարեկան խնայողությունները՝ 63 մլն ԱՄՆ դոլար (ըստ գազի և էլեկտրաէներգիայի 2014 թ. սակագների):

Հանրային շենքերի տարեկան ծախսերում էներգետիկ ծախսերը մեծ տեսակարար կշիռ ունեն: Կրթական, մունիցիպալ և առողջապահական նշանակության շենքերում կատարված հետազոտության տվյալներից պարզվում է, որ հետազոտված շենքերի 35 տոկոսի մոտ տարեկան ընդհանուր ծախսերի 11-ից 20% - ը կազմում է էլեկտրաէներգիայի համար կատարված վճարները:<sup>2</sup> Էլեկտրաէներգիայի ծախսերը մասնավորապես բարձր են կրթական

<sup>1</sup> Karner, A., 2013, Mid-term Evaluation of the UNDP-GEF project “Improving energyefficiency in Buildings in Armenia (EE Buildings)” PIMS 4245.

<sup>2</sup> Energy Consumer Survey in Armenia: Residential, Commercial, Public and Industrial Sectors. Advanced Engineering Associates International. September 2006.



հաստատություններում, որտեղ հարցվողների 27% -ը պատասխանել են, որ էլեկտրաէներգիայի համար ծախսերի մասնաբաժինն անցնում է 20%-ի շեմը: Ձմռանը շատ դպրոցներ փակվում են, քանի որ նրանք չեն կարողանում պատշաճ ջեռուցում ապահովել, իսկ աշխատելու դեպքում՝ ներսի օդի ջերմաստիճանը հաճախ համապատասխան մակարդակից էապես ցածր է լինում:

**Բնակելի շենքեր և վառելիքային աղքատություն.** 2007 թվականից ի վեր Հայաստանում ավելացել է աղքատության մակարդակը, ինչը հիմնականում ներկրվող էներգիայից բարձր կախվածության և կենցաղային էներգիայի գների թանկացման հետևանքով առաջացած էներգետիկ ճգնաժամի արդյունքն է: Հայաստանում տնային տնտեսությունների էներգետիկ ծախսերը՝ եկամտի համեմատ բարձր են, որը հանգեցնում է վառելիքային աղքատություն: Ըստ բնակելի շենքերում էներգիայի սպառման մասին 2015 թվականին իրականացված հարցման, ջեռուցման ծախսերը կազմում են տնային տնտեսությունների եկամտի մոտ 14-20% -ը:<sup>3</sup> Աղքատության միջին ազգային ցուցանիշի համեմատ բնակչության մոտ 32%-ը ապրում է աղքատության շեմից ցածր:<sup>4</sup>

Հայաստանի տնային տնտեսությունները էներգետիկայի համար միջին հաշվով ծախսում են իրենց բյուջեի մոտ 8% -ը, ինչպես նաև դրա կեսից մի փոքր ավելին՝ գազի համար: Նրանց ամենաաղքատ հինգերորդ մասը էներգիայի ընդհանուր և ջեռուցման համար ծախսում է իրենց բյուջեի համապատասխանաբար 7% և 6.5% -ը:<sup>5</sup> Ռուսաստանից ներմուծված գազի սակագինը 2010թ. ավելացել է, որը հանգեցրել է բնակելի հատվածի սպառողների համար գազի մանրածախ գնի գրեթե 40% -ով աճի: Այս աճի ազդեցությունների վերլուծության մեջ Համաշխարհային բանկը գնահատում է, որ դա հանգեցրել Հայաստանում որպես աղքատ դասակարգված տնային տնտեսությունների 1,9% լրացուցիչ աճի: Գազի գնի աճը նաև հանգեցրել է տնային տնտեսությունների ջեռուցման համար օգտագործվող վառելիքային մասնաբաժնի ավելացմանը, որը հանգեցրել է ներսի օդի աղտոտվածության մեծացմանը:

Հայաստանի քաղաքային բնակավայրերում տիրող համատարած աղքատության և գերակշռող անհավասարության իրավիճակի պատճառով տնային տնտեսությունների առնվազն մեկ հինգերորդը չի կարողանում իրեն թույլ միանգամից կատարել ԷԱ արդիականացման ծախսերը: Մատչելիության բացը լրացնելու և ԷԱ արդիականացման պահանջարկը խթանելու նպատակով, նպատակաուղղված սուբսիդիաների միջոցով Ծրագիրն ուղղակիորեն թիրախավորում է այս խմբերը:

**Հանրային շենքեր.** Հանրային շենքերի տարեկան ծախսերում էներգետիկ ծախսերը մեծ տեսակարար կշիռ ունեն: Հանրային շենքերի ԷԱ արդիականացման համար անհրաժեշտ ներդրումներ կատարելու առումով Հայաստանի Հանրապետության կառավարության և քաղաքապետարանների առկա բյուջեները ֆինանսապես կաշկանդված են: Չնայած նրան, որ շենքերի ԷԱ արդիականացման ներդրումների համար տեղական բանկերը վարկային գիծ են տրամադրում, շենքերի ԷԱ արդիականացման ֆինանսավորման համար պոտենցիալ շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ բնակելի առանձնատների, բազմաբնակարան և հասարակական շենքերի համար տեղական կապիտալի շուկայում ֆինանսական գործիքների խորության և պատմության պակաս կա:

ՄԱԿ-ի ԿՓՇԿ ներքո Հայաստանի երրորդ ազգային հաղորդագրությունը (2015թ.)<sup>6</sup> երկրում ԶԳ արտանետումների քաղաքականությունների և մեղման միջոցառումների վերաբերյալ

3 Residential Energy Consumption Survey. UNDP, EDRC 2015, <http://www.nature-ic.am/en/publications/Residential-energy-consumption-survey/7374>

4 <http://data.worldbank.org/country/armenia>

5 World Bank (2012). *Poverty and Distribution Impact of Gas Price Hike in Armenia*: <https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/11988/WPS6150.pdf?sequence=1>

6 [http://www.nature-ic.am/wp-content/uploads/2013/10/1.Armenias-TNC\\_2015\\_ENG.pdf](http://www.nature-ic.am/wp-content/uploads/2013/10/1.Armenias-TNC_2015_ENG.pdf), p. 21

թարմացված տեղեկությունների ակնարկ է ներկայացնում: Երկրում կլիմայի փոփոխության մեղմման առաջնահերթությունների շարքում առանձնացվում են հանրային, բնակելի և առևտրային շենքերը՝ շենքերից ԶԳ արտանետումները 2000 և 2010թթ. ընթացքում աճել են հինգ անգամ՝ 2000թ. 345 կտCO<sub>2</sub> –ից 2010թ. աճելով մինչև 1,723 կտCO<sub>2</sub>: ՄԱԿ-ի ԿՓՇԿ ներքո Հայաստանի գիտատեխնիկական կարիքների գնահատմամբ (ԳՏԿԳ)<sup>7</sup> (2003թ.) շենքերի ջերմամատակարարումը ճանաչվել է որպես ԶԳ արտանետումների հիմնական աղբյուրներից մեկը և մի ոլորտ, որը ԷԱ բարձրացման և արտանետումների կրճատման մեծ պոտենցիալ ունի:

Հայաստանի կլիմայական, էներգետիկ և բնակֆոնդի ռազմավարությունների համար շենքերի ոլորտում ԷԱ բարձրացումը բարձր առաջնահերթություն է համարվում: Մասնավորապես, ԷԱ արդիականացման միջոցով ջերմային արդիականացման հասնելը՝ հատկապես բազմաբնակարան շենքերում, նախանշված է որպես ազգային զարգացման առաջնահերթություն: Սա հատկապես հստակորեն արտացոլվում է ԷԱ ազգային Ծրագրի (2007թ.), Ազգային անվտանգության ռազմավարության (2007), էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգի (2013) և էներգետիկ անվտանգության ռազմավարության գործողությունների ծրագրի (2014) դրույթներում, որոնք, բոլորն էլ, ընդունում են շենքերի ոլորտի ԷԱ պոտենցիալը և նախանշում են ձեռնարկվելիք տեխնիկական միջոցառումները/լուծումները: Բացի այդ, Քաղաքապետերի դաշնագիրը (17 քաղաքներ միացել են այդ դաշնագրին) նախանշում է շենքերի ԷԱ նպատակները: Վերջերս ՄԱԶԾ աջակցել է Երևանի քաղաքապետարանին՝ Կայուն էներգիայի գործողությունների ծրագրի մշակման գործում, որը 2016 թ. հունիսի 14-ին հաստատվել է քաղաքի ավագանու խորհրդի կողմից և զբաղվելու է շենքերի ոլորտի հարցերով: 2004թ.-ից ի վեր Հայաստանը ներգրավված է Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) գործընթացներում: ԵՀՔ գործողությունների ծրագիրը հաստատվել է 2006թ. և աջակցում է Հայաստանի օրենսդրության, նորմերի և ստանդարտների ներդաշնակեցմանը ԵՄ ԷԱ չափանիշներին:

Հայաստանում շենքերում ԷԱ կանոնակարգող ընդհանուր իրավական-կարգավորող դաշտը դիտարկվել է 2013թ. «Բնակելի շենքերի էներգաարդյունավետության բարձրացման խոչընդոտների հաղթահարման արդյունքների և առաջարկությունների վերլուծություն. Ռազմավարության զեկուց» հաշվետվությունում, ինչը «Հայաստանում բնակելի շենքերի էներգետիկ արդյունավետության բարձրացում» ՎԶԵԲ ծրագրի արդյունքներից մեկն էր: Իրավական-կարգավորող դաշտը ներառում է այն խաչաձևվող օրենսդրական դաշտը, որը կանոնակարգում է շենքերի էներգետիկ արդյունավետությունը, ինչպես նաև շինարարությանն առնչվող օրենսդրությունը: Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության ազգային ծրագիրն առանձնացնում է էներգախնայողության խոշորագույն պոտենցիալ ունեցող ոլորտները և առաջարկում է էներգիայի սպառումը նվազեցնող՝ ԷԱ միջոցառումների 16 կատեգորիաներ, որն ընդգրկում է շենքերի ոլորտը:<sup>8</sup>

Հայաստանում մի շարք նախաձեռնություններ նպատակաուղղված են ԷԱ արդիականացման վրա, սակայն դրանցից ոչ մեկը բազմաթիվ սեփականատերերով բնակելի շենքերի համար շենքի մակարդակով արդիականացման նպատակային ֆինանսավորում չի առաջարկում: Բացի այդ, չնայած նրան, որ ՓՄՁ-ներին և անհատ ձեռնարկատերերին ԷԱ վարկավորման փաթեթներ առաջարկող մի քանի առևտրային բանկեր կան, սակայն շենքերի արդիականացման ոլորտը դեռ դրան անմասն է մնացել՝ ընկալվող բարձր ռիսկերի պատճառով, ինչպիսիք են օրինակ՝

<sup>7</sup> [http://unfccc.int/ttclear/misc\\_/StaticFiles/gnwoerk\\_static/TNR\\_CRE/e9067c6e3b97459989b2196f12155ad5/19789a07b4de493cb72e43c47fd4db1e.pdf](http://unfccc.int/ttclear/misc_/StaticFiles/gnwoerk_static/TNR_CRE/e9067c6e3b97459989b2196f12155ad5/19789a07b4de493cb72e43c47fd4db1e.pdf)

<sup>8</sup> Շենքերի ոլորտի ԷԱ առնչվող պետական քաղաքականության, օրենսդրության և ենթաօրենսդրական ակտերի մանրամասն ակնարկը ներկայացվում է 1.2 բաժնում:

բազմաթիվ սեփականատերերով բնակելի շենքերում կոլեկտիվ որոշումների կայացման/վճարների գանձման ռիսկերը:

Այս Ծրագիրը լիովին համահունչ է ՀՀ կառավարության կողմից 2015թ. սեպտեմբերին հաստատված «Հայաստանի Ազգային մակարդակով սահմանված նախատեսվող ներդրումների (ԱՄՍՆՆ)» մասին փաստաթղթին: Մասնավորապես, ԱՄՍՆՆ-ը «Էներգետիկայի (վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության)» և «Քաղաքաշինություն (շենքեր և շինարարություն)» ոլորտները վերագրվում են այն հիմնական ոլորտների թվին, որոնք ընդգրկված են Հայաստանի ազգային մակարդակով սահմանված նախատեսվող մեղմման ներդրումներում: ԱՄՍՆՆ-ը նաև ընդունում է, որ «Էներգետիկան» և «Բնակավայրերը» կլիմայի փոփոխության առավել խոցելի ոլորտներն են: Այնուհետև ԱՄՍՆՆ-ը ընդգծում է, որ «կլիմայի փոփոխության մեղմման գործողությունները չպետք է հակադարձեն Հայաստանում սոցիալական և տնտեսական միտումներին, այլ պետք է նպաստեն երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գործին», որը հենց այն է, ինչին այս Ծրագիրը մտադիր է հասնել Հայաստանի շենքերի ոլորտում կլիմայի փոփոխության մեղմման միջոցառումների համատեքստի շրջանակներում: Եվ վերջում, ԱՄՍՆՆ-ն ընդունում է, որ կլիմայի փոփոխության մեղմման ազգային թիրախին հասնելու համար «միջազգային ֆինանսական, տեխնոլոգիական և կարողությունների հզորացման օժանդակության համարժեք (անհրաժեշտ և բավարար) աջակցություն» կպահանջվի, այդ թվում՝ ԿԿՀ-ից:

Այս Ծրագիրը կնպաստի Հայաստանում համապատասխան քաղաքականությունների և գործառույթների իրականացման միջոցով՝ ցածր արտանետումների և կլիմայի տոկոս զարգացման բացահայտված առաջնահերթություններին համահունչ ԷԱ սկզբունքների կիրառմանը, մասնավորապես.

- Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ազգային ծրագիրը (2007թ.) կարևորում է զարգացման պետական քաղաքականության համահարթեցումը, և երկրի ֆինանսավարկային քաղաքականությունն ուղղորդում է դեպի էներգախնայողության և ԷԱ օգուտների և շուկայի մասնակիցների համար արդյունավետ մեխանիզմի ապահովման համար շուկայական ակտիվ կառույցների ստեղծմանը և պահպանմանը:
- ԷԱ կարգավորող երկու օրենքները. Հայաստանի Հանրապետություն էներգետիկայի մասին օրենքը (2001թ.) և էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին օրենքը (2004թ.): Այս օրենքները սահմանում են էներգետիկայի ոլորտի, այդ թվում՝ էներգիայի արդյունավետ օգտագործման ապահովման, Հայաստանի էներգետիկ անկախության ապահովման, և վերականգնվող էներգետիկան և էներգախնայողությունը զարգացնելու նպատակով նոր արտադրությունների ստեղծման և նոր ծառայությունների կազմակերպման, ազգային նպատակային ծրագրերի իրականացման և նոր տեխնոլոգիաների կիրառման հիմնական դրույթներն ու սկզբունքները:

Այս Ծրագիրը և նրա միջամտությունները խստորեն հարմարեցված են վերջերս պատրաստված Հայաստանի կառավարության «էներգաարդյունավետ հանրային շենքեր և բնակարաններ Հայաստանում ԱՀՀՄԳ» -ին (2014 թ.):<sup>9</sup> Այս ԱՀՀՄԳ կնպաստի հանրային շենքերի և սոցիալական բնակարանների էներգաարդյունավետությանը՝ հատուկ ուշադրություն դարձնելով նորակառույց շենքերի, կապիտալ վերանորոգման և հանրային շենքերի կառավարման ԷԱ միջոցառումների վրա: ԱՀՀՄԳ կաջակցի Հայաստանի քաղաքներին մինչև 2020թ. էներգիայի սպառումից ջերմոցային գազերի արտանետումները 20% -ով նվազեցնելու իրենց պարտավորությունների կատարմանը: ՄԱԶԾ-ԿԿՀ Ծրագիրը հատկապես նախատեսված է աջակցելու ԱՀՀՄԳ-ին հասնելու վերափոխման արդյունքներին՝ ԱՀՀՄԳ հետևյալ նպատակները թիրախավորելու միջոցով.

<sup>9</sup> <http://www4.unfccc.int/sites/nama/SitePages/Country.aspx?CountryId=8>

- Օժանդակել քաղաքականության, կարգավորող, ինստիտուցիոնալ և շուկայի վերափոխմանը, որը տանում է դեպի շենքերի ԷԱ ավելի բարձր մակարդակը և նվազեցնում է շենքերի ոլորտից ՋԳ արտանետումները:
- Նպաստել առողջապահական, կրթական, մշակութային և այլ ոլորտների հանրային շենքերի բարելավված ԷԱ, բարելավել հարմարավետության մակարդակը և կրճատել էներգետիկ ծախսերի համար պետական բյուջեից հատկացումները՝ զուգահեռաբար բարելավելով հանրային ծառայությունների ընդհանուր որակը:
- Շենքերի ինտեգրված նախագծման հայեցակարգի կիրառման միջոցով օժանդակել Հայաստանում պատշաճ և մատչելի բնակարանների տրամադրմանը, և նպաստել շենքերի շահագործման ընդհանուր ծախսերի նվազեցմանը, հանրային ծախսերի և օգտագործողների / հաճախորդների համար ծախսերի նվազեցմանը:
- Նպաստել շինարարության և շենքերի ոլորտին առնչվող Հայաստանի զարգացման (շրջակա միջավայրի, տնտեսական և սոցիալական) նպատակներին:
- Երկարաժամկետ առումով օժանդակել դեպի ցածր արտանետումներով զարգացման ուղու վերափոխմանը:
- Նպաստել Հայաստանի էներգետիկ անվտանգության բարելավմանը:

## **1.2. Խոչընդոտները, հիմնապատճառները և սպառնալիքները հաղթահարելու ներկայիս պետական քաղաքականությունը**

Բոլոր շենքերում, մասնավորապես՝ բազմաբնակարան շենքերում ջերմային արդիականացման միջոցով ԷԱ արդիականացմանը հասնելը ազգային զարգացման առաջնահերթությունն է: ԷԱ արդիականացումը երկրի կողմից պատրաստված առաջին ԱՀՀՄԳ-ի հիմնաքարն է և կաջակցի Հայաստանի քաղաքներին մինչև 2020թ. էներգիայի սպառումից ջերմոցային գազերի արտանետումները 20% -ով նվազեցնելու իրենց պարտավորությունների կատարմանը: Արդիականացումը նաև նվազեցնում է էներգիայի սակագների աճի բացասական սոցիալական ազդեցությունը (2008թ.-ից մինչև 2014թ.-ը բնակելի հատվածի հաճախորդների համար էլեկտրաէներգիայի միջին սակագները գրեթե կրկնապատկվել է, իսկ բնական գազի սակագները նույն ժամանակահատվածում աճել են 2.6 անգամ) և այն երկարացնում է շենքերի ֆոնդի կյանքի տևողությունը (ի թիվս բազմաթիվ այլ օգուտների): Քանի որ բոլոր շենքերում ջերմաարդիականացման միջոցով ԷԱ բարձրացմանն հասնելը ազգային զարգացման առաջնահերթությունն է, ապա այդպիսի արդիականացման մեջ ներդրումները խրախուսելու համար քաղաքականության ոլորտում ավելին կարելի է անել: Բացի քաղաքականության խոչընդոտներից, մի շարք այլ տեսակի խոչընդոտներ շարունակում են խանգարել շենքերի ԷԱ արդիականացման մեջ մասնավոր հատվածի կապիտալի ներդրմանը:

Կան նաև որոշակի ոլորտներին բնորոշ խոչընդոտներ: Հանրային ոլորտում բյուջեներն այնպես են կառավարվում, որ շենքերի շահագործողներին չեն խրախուսում էներգիա խնայել: Օրինակ, ԷԱ բարձրացման դեպքում քաղաքային էներգետիկ բյուջեները կկրճատվեն են (քանի որ բյուջեները որոշվում են նախորդ տարվա փաստացի ծախսերի հիման վրա): Սա նվազեցնում է ինչպես շենքերի կառավարիչների, այնպես էլ մասնավոր հատվածի (ԷԾՄԸ-ներ) շահագրգռվածությունը ԷԱ պայմանագրերի (ԷԱՊ-ներ) հիման վրա ԷԱ ծառայություններ իրականացնել, քանի որ ծախսերի կրճատումների արդյունքում բյուջեի հատկացումները կրճատվում են և դրանով նվազում են պետական հաստատությունների հնարավորությունները վճարել ԷԱ ծառայությունների համար:

Բազմաբնակարան շենքերում առանձին բնակարանների սեփականատերերի կողմից կատարվող վերանորոգման աշխատանքները կարող են միայն սահմանափակ արդյունքների հանգեցնել, քանի որ էներգիայի խնայողության ամենամեծ ներուժը բացահայտվում է շենքի ամբողջական արդիականացման ժամանակ: Սակայն, բազմաթիվ սեփականատերերին պատկանող շենքերում համատեղ գործողությունների առաջ մի շարք խոչընդոտներ են ծառանում, որոնք, առանց այդ խոչընդոտները վերացնելուն նպատակաուղղված ջանքերի, դժվարացնում են շենքի մակարդակով ջերմասարդիականացման գործընթացը՝

- Բանկերը դժկամությամբ են ֆինանսավորում այդպիսի ներդրումները. համատիրությունները կարող են բանկի համար անընդունելի վարկառուներ համարվել:
- Մեծաքանակ սեփականատերերի միջև պայմանավորվածության անհրաժեշտությունը, որոնց շարքում կարող են բացակայող սեփականատերեր լինել, ովքեր հազիվ թե շահագրգռված լինեն ԷԱ միջոցառումներում ներդրումներ կատարել, և աղքատ տնային տնտեսություններ՝ ովքեր ի վիճակի չեն անմիջապես վճարել այդ ծախսերը:
- Շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների նկատմամբ սեփականության իրավունքի կամ պատասխանատվության հստակության պակասը:

Քաղաքականություն, ֆինանսական, շուկայի և տեխնիկական/կարողությունների նման խոչընդոտների առկայության պատճառով Հայաստանում շենքերի ԷԱ արդիականացման ներդրումային ռիսկերի ընդհանուր պատկերը զսպող է, որը, չնայած էներգախնայողության և ջերմոցային գազերի արտանետումների կրճատման բարձր ծախսարդյունավետությամբ հնարավորությունների հսկայական ներուժի առկայությանը, կաշկանդում է մասնավոր և պետական հատվածի ներդրումները:

## Խոչընդոտներ

### Աղյուսակ 1. Շենքերի ԷԱ արդիականացման հիմնական խոչընդոտները

խոչընդոտի տեսակը	նկարագրությունը	հատվածը	առաջնահերթությունը
Ֆինանսական	Անբավարար ֆինանսական միջոցներ. տների սեփականատերերից և հանրային հատվածի շահագործողներից շատերն առանց վարկերի օգնության շենքերի ԷԱ արդիականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներից զուրկ են: Սա մասնավորապես խնդիրներ է առաջացնում ցածր սոցիալ-տնտեսական խմբերի համար, որոնք վարկերի ամենամեծ կարիքն ունեցող և, միևնույն ժամանակ, ամենացածր վարկունակությամբ հաճախորդներն են:	բոլորը, մասնավորապես բնակելի հատվածը	Շատ բարձր. շենքերի ԷԱ արդիականացման համար սկզբնական ներդրումային ծախսերը խստորեն սահմանափակում են տների սեփականատերերին և հանրային հատվածի շահագործողներին անհրաժեշտ ներդրումներ կատարել: Ծրագիրն այդ խնդիրը կլուծի ուղղակիորեն՝ անապահով տնային տնտեսություններում խրախուսական միջոցների փորձարկման միջոցով, և աշխատելով կառավարության հետ՝ անապահով ոլորտում ԷԱ արդիականացման համար տեղական աջակցության մեխանիզմների ստեղծման ուղղությամբ:
	Ընկալվող բարձր ռիսկերի պատճառով տեղական առևտրային բանկերն ԷԱ վերանորոգման համար տների սեփականատերերին կամ		բոլորը, մասնավորապես

խոչընդոտի տեսակը	նկարագրությունը	հատվածը	առաջնահերթությունը
	պետական մարմիններին դժկամությամբ են վարկեր տրամադրում:	ես բնակելի հատվածը	անհասանելիությունը սահմանափակում է շուկայի ընդլայնումը: Այդ դիսկերի նվազեցման, էւ արդիականացման նախագծերի ֆինանսական կենսունակության բարելավման և բանկերի կողմից այդ դիսկերի / հնարավորությունների ըմբռնման բարձրացման միջոցով շենքերի ամբողջ ոլորտը կարող է տեղափոխվել մի ավելի կայուն՝ ցածր արտանետումներով ուղեծիր:
	Էներգիայի ցածր գների պատճառով տների սեփականատերերի կամ պետական մարմինների մոտ քիչ շարժառիթներ կան մտածել ավելի էւ լուծումների մասին:	բոլորը	Միջին՝ բարձր. էներգիայի սակագները դեռևս լիովին չեն արտացոլում ծախսերը: Չնայած վերջին 10 տարիների ընթացքում միջին սակագների զգալի բարձրացմանը, դրանք դեռևս բավարար շարժառիթներ չեն ստեղծում շենքերի էւ արդիականացման ներդրումների համար հատկապես հանրային հատվածում, որտեղ այդ շարժառիթներն ավելի թույլ են, քանի որ շենքերի շահագործողները հաճախ սպառված էներգիայի դիմաց չեն վճարում:
Ֆինանսական / ինստիտուցիոնալ	Էներգիայի սպառման կրճատման ցածր շարժառիթներ. պետական բյուջեները կառավարվում են ըստ կարճաժամկետ խնդիրների լուծման առաջնահերթության սկզբունքի: Հանրային շենքերի տնօրինման և շահագործման և դրանց ծախսերի (այսինքն՝ սպառված էներգիայի հաշիվների) համար հաճախ վճարվում է քաղաքային բյուջեներից կամ, դպրոցների և հիվանդանոցների համար՝ կրթության կամ առողջապահության խորհուրդների միջոցով:	հանրային	Բարձր. շենքերի շահագործողների համար հաճախ էներգիան խնայելու քիչ շարժառիթներ կան, հատկապես, երբ բյուջեն հատկացվում է տարվա կտրվածքով: Հանրային շենքերում էւ արդիականացման ներդրումները խթանելու համար անհրաժեշտ է շարժառիթների վերաբաշխում կատարել:
Քաղաքականություն	Կամավոր շինարարական նորմեր. Նորակառույց բնակելի շենքերի դեպքում շինարարության էնեգետիկ նորմերը միայն մասնակիորեն են կիրարկվում, մինչ շենքերի վերականգնման դեպքում շինարարության էնեգետիկ նորմերի պահպանման համար որևէ պահանջ չի դրվում: Չկա նաև շենքերի էւ համար որևէ ստանդարտացված գնահատման համակարգ:	բոլորը	Բարձր. էւ արդիականացման համար քիչ շարժառիթներ կան, երբ շինարարական նորմերով չի սահմանվում էւ արդիականացման համար պահանջվող էւ մակարդակը: էւ արդիականացման համար շինարարական նորմերի ներդրումը կարող է շենքերի բոլոր ոլորտներում խթանել մասնավոր հատվածի ներդրումների պահանջարկը:
	էւ պահանջների կիրարկումը ցածր է: Մինչ ՄԱՁԾ-ԳԷՖ-ի շենքերի էւ նախագծերը սկսել են էներգետիկ	բոլորը	Շատ բարձր. առանց աուդիտների՝ շենքերում փաստացի էւ ցուցանիշների մասին առկա հուսալի

խոչընդոտի տեսակը	նկարագրությունը	հատվածը	առաջնահերթությունը
	անձնագրերի ներդրման ծրագիրը, կիրարկման կարողությունները շարունակում են ցածր մնալ, և շենքերի փաստացի ցուցանիշները և շինարարական նորմերին դրանց համապատասխանությունը որոշելու համար քիչ քանակությամբ էներգետիկ աուդիտների են իրականացվել		տվյալներ չկան: Առանց այդ տեղեկությունների հնարավոր չի գնահատել նորմերի համապատասխանությունը կամ տեսանելի կերպով ցուցադրել էԱ տնտեսական օգուտները (որը կարող է օգնել հաղթահարել շենքերի էԱ արդիականացման տեղեկատվական խոչընդոտները):
Իրավական / Ինստիտուցիոնալ	Բազմաթիվ սեփականատերերով բնակելի շենքերի թույլ կարողությունները . շենքի կառավարումն ու վերանորոգումը, ծրագրի մշակումը, ֆինանսական պլանավորումը և կառավարումը, միջոցների հայթայթումը, մարդկային ռեսուրսների կառավարումը , հաշվապահությունը, հաշվետվողականությունը և հաճախորդների հետ հարաբերությունները թույլ են:	բազմաթիվ սեփականատերերին պատկանող շենքեր	Բարձր. բազմաթիվ սեփականատերերով գույքը և կոլեկտիվ որոշումներ կայացնելը հատկապես դժվար բան է, և համապատասխան և կիրարկվող ենթաօրենսդրական ակտեր գոյություն չունեն: Շենքի սեփականատերերի կողմից ներդրումներ կատարելու որոշում կայացնելու անկարողությունը սահմանափակում է էԱ շուկայի պոտենցիալը:
	Ներդրումների մասին որոշում կայացնելու ոչ ճկուն գործելակերպ. նվազագույն արժեքով գնման գործելակերպը, որի համաձայն արդիականացման/վերակառուցման նախագծերի վերաբերյալ որոշումները կայացվում են շինարարության սկզբնական արժեքի հիման վրա՝ կենսափուլի արժեքի փոխարեն, տարբերվում է շենքի արդյունավետ արդիականացումից, որը կարող է ավելի բարձր սկզբնական ծախսեր առաջացնել, սակայն որի շահագործման ծախսերը ցածր են:	բոլորը	Միջին՝ բարձր. հանրային հատվածի շինարարության և արդիականացման համար այդտեղ զգալի խոչընդոտներ կան, սակայն, քանի որ պետական շինարարությունը սահմանափակ մասնաբաժին ունի շուկայում , ապա ընդհանուր առմամբ այդ խոչընդոտի ազդեցությունը շենքերի ոլորտի վրա սահմանափակ է:
Տեխնիկական / կարողություններ	Շենքերի ոլորտի խաղացողների ցածր կարողությունները. էԱ շենքերի նախագծման և կառուցման գիտելիքներն ու ավանդույթները, ինչպես նաև շենքերում էներգիայի արդյունավետ կառավարումը թույլ են, քանի որ վատ կիրարկման և շենքերի էԱ օգուտների թյուր ընթացման պատճառով նախկինում դա չի խրախուսվել:	բոլորը	Շատ բարձր. նույնիսկ նորմերի խստացման դեպքում, առանց ավելի արդյունավետ՝ նորմերին համապատասխանող շենքեր նախագծող ճարտարապետների և շինարարների հնարավոր չի լինի պահպանել դրանք:
Տեղեկություն / իրազեկվածություն	Հայաստանցիներից շատերի համար էԱ ամբողջությամբ գնահատված և ճանաչված չէ: Շենքի սեփականատերերի շրջանում իրազեկվածության մակարդակը ցածր է, շենքերի անձնագրավորման գործառույթների բացակայության պայմաններում անշարժ գույքի գործակալությունները և տարածքը	բոլորը	Միջին՝ բարձր: Չնայած բարելավված նորմերը կարտատարեն բարձրացնել արդյունավետությունը, սակայն այս ընկալումը կարող է ճարտարապետներին և շինարարներին (ու գնորդներին՝ շենքի էԱ գնահատման չափանիշների բացակայության դեպքում) ետ պահել նորմերով

խոչընդոտի տեսակը	նկարագրությունը	հատ-վածը	առաջնահերթությունը
	զբաղեցնողները անտեղյակ են շահագործման ծախսերից և էներգիայի ու փողի խնայողության հնարավորություններից: Նաև մի ապատեղեկացված ընկալում կա, որ շենքերում արդյունավետ շինարարական նորմերի ամբողջական պահպանումը և էԱ էԱ կարող է անչափ թանկ արժենալ Հայաստանում:		սահմանված էներգետիկ ցուցանիշների պահանջները գերազանցող շենքերը դիտարկելուց և շուկան առաջ տանելուց:
	էԱ ապրանքների և ծառայությունների չհասունացած շուկա. մեծ թվով շինարարական և տեխնիկական սպասարկման ընկերությունների կողմից հնացած տեխնոլոգիաների և անարդյունավետ նյութերի օգտագործում:	բոլորը	Բարձր. շինարարության ոլորտի ներկայիս գործելակերպն ուղղակիորեն ազդում է շենքերի ֆոնդի կատարողական ցուցանիշների վրա, սակայն դա ի վերջո բխում է արդյունավետ շինարարական նորմերի բացակայությունից, արդյունավետ նախագծման կարողությունների պակասից և նյութերի հատկությունների մասին տեղեկատվության ցածր մակարդակից:
	էԱ ապրանքների և ծառայությունների չհասունացած շուկա. մեծ թվով շինարարական և տեխնիկական սպասարկման ընկերությունների կողմից հնացած տեխնոլոգիաների և անարդյունավետ նյութերի օգտագործում:	բոլորը	Բարձր. ՄԱԶԾ ներկայիս մի նախագիծ սկսել է շինանյութերի և արդյունավետության պահանջների փորձարկման ու հավաստման համակարգի ստեղծումը: Սակայն անհրաժեշտ է ընդլայնել այս գործելակերպի ընդունումը և ուժեղացնել դրա կիրարկումը:
	Շինանյութերն էԱ տեսակետից սերտիֆիկացված չեն:	բոլորը	Բարձր. չսերտիֆիկացված նյութերը շատ կոժվարացնեն ճարտարապետների և շինարարների գործը հավաստելու, որ իրենց շենքերը համապատասխանում են նորմերին և ապահովում են ցանկալի էներգետիկ ցուցանիշները, թե ոչ:

### **Կառավարության ներկայիս քաղաքականությունը**

2015թ. հրապարակված ՄԱԿ-ի ԿՓՇԿ ներքո Հայաստանի երրորդ ազգային հաղորդագրությունը երկրում ԶԳ արտանետումների մեղմմանն ուղղված քաղաքականությունների և միջոցառումների մի թարմացված ակնարկ է ներկայացնում: Այնտեղ շենքերը համարվում են որպես ազգային մակարդակում մեղմման գործողությունների գերակա ոլորտ: ՄԱԿ-ի ԿՓՇԿ ներքո Հայաստանի ԳՏԿԳ-ը<sup>10</sup> շենքերի ջերմամատակարարումը

<sup>10</sup> ՀՀ բնապահպանության նախարարություն, 2003թ., Հայաստան՝ Երկրում կլիմայի փոփոխության



ճանաչվում է որպես ՋԳ արտանետումների հիմնական աղբյուրներից մեկը և մի ոլորտ, որը էներգախնայողության և արտանետումների կրճատման մեծ պոտենցիալ ունի: ԱՄՄՆՆ նախագիծը, նույնպես, ընդունում է շենքերում արդյունավետության խնդիրների լուծման անհրաժեշտությունը:

Հայաստանում էԱ սկզբունքները կառավարվում են *էներգաարդյունավետություն ազգային ծրագրի (2007 թ.)*, *էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգի (2013թ.)* և *էներգետիկ անվտանգության ռազմավարության գործողությունների ծրագրի (2014 թ.)*, դրույթների միջոցով, որոնք ի հայտ են բերում շենքերի ոլորտի էԱ պոտենցիալը և նախանշում են ձեռնարկվելիք տեխնիկական միջոցների / լուծումների ուրվագիծը, շենքերի էԱ նպատակները ուրվագծված են նաև Քաղաքապետերի Դաշնագրում (17-քաղաքներ արդեն միացել են այդ դաշնագրին):

### **Առնչվող նախաձեռնություններ**

Շենքերի էԱ բարձրացման նպատակով ՀՀ կառավարությունը շարունակում է ակտիվորեն աշխատել զարգացման գործընկերների՝ ՄԱԶԾ-ի, ՀԲ, ՎՋԵԲ-ի, ԱՄՆ ՄԶԳ-ի և այլ դոնորների էԱ ծրագրերի հետ: Սակայն, շենք-շինությունների էԱ ներկայիս ծրագրերն ուղղված են նորակառույցների և, հիմնականում, հանրային հատվածի շենքերի էԱ արդիականացման վրա, մինչդեռ ֆինանսական ռիսկի բարձր մակարդակով պայմանավորված՝ բնակելի, առևտրային և արդյունաբերական նշանակության շենքերի արդիականացումը մեծամասնությամբ անտեսվել է: Բացի այդ, չնայած նրան, որ ՓՄՁ-ներին և անհատ ձեռնարկատերերին էներգախնայողության վարկավորման փաթեթներ առաջարկող մի քանի առևտրային բանկեր կան, սակայն շենքերի արդիականացման ոլորտը դեռ դրան անմասն է մնացել՝ ընկալվող բարձր ռիսկերի պատճառով, ինչպիսիք են օրինակ՝ բազմաթիվ սեփականատերերով բնակելի շենքերում կոլեկտիվ որոշումների կայացման / վճարումների կատարման ռիսկերը:

Ինչ վերաբերում է շենքերի էԱ վերակառուցմանն ուղղված կոնկրետ միջոցառումներին, ապա ՀԲ (տարբեր ԾԻԳ-երի և ՀՎԷԷՀ միջոցով) ֆինանսավորում է հանրային հատվածի ծրագրերը: Այլ ֆինանսական ինստիտուտներ (ՎՋԵԲ, Ֆրանսիական զարգացման գործակալություն, ՀԶՀ ՄՖԿ, GGF, KfW)՝ հիմնականում մասնակից բանկերի/ վարկային կազմակերպությունների միջոցով, բնակելի հատվածի էԱ վարկավորում են իրականացնում կամ պլանավորում և վարկային գործիքներ են առաջարկում տնային տնտեսությունների էԱ արդիականացման համար: Այդուհանդերձ, այդ կազմակերպություններից ոչ մեկը բնակելի շենքերի համար շենքի մակարդակով էներգաարդիականացման ֆինանսավորման լուծումներ չի առաջարկում, որոնք հնարավորություն կտային բազմաբնակարան շենքերի բնակարանների սեփականատերերի միություններին ամբողջ շենքի արդիականացման համար ֆինանսական միջոցներ ձեռք բերել: Ամբողջ շենքի մակարդակով արդիականացումը կարող է ավելի բարձր էներգա-խնայողությունների հանգեցնել, քան առանձին բնակարանների սեփականատերերի կողմից իրականացվող միջոցառումները:

---

ուսումնասիրություն, 2-րդ փուլ: Ներբեռնված է

[http://unfccc.int/ttclear/misc/\\_StaticFiles/gnwoerk\\_static/TNR\\_CRE/e9067c6e3b97459989b2196f12155ad5/19789a07b4de493cb72e43c47fd4db1e.pdf](http://unfccc.int/ttclear/misc/_StaticFiles/gnwoerk_static/TNR_CRE/e9067c6e3b97459989b2196f12155ad5/19789a07b4de493cb72e43c47fd4db1e.pdf) կայքից:

## 2. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

### 2.1. Ծրագրի նպատակը

#### *Նպատակը*

Մասշտաբավորել Հայաստանում շենքերի ԷԱ արդիականացմանն ուղղվող ներդրումները և նվազեցնել շենքերի ԷԱ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի պատկերը և դրանով խրախուսել մասնավոր հատվածի ներդրումներն ու նվազեցնել վառելիքային աղքատություն:

Ծրագիրը ԷԱ արդիականացման ներդրումների համար բարենպաստ շուկայական միջավայր և մասշտաբավորման ընդունակ բիզնես մոդել կատեղծի, որը կհանգեցնի էներգիայի էական խնայողությանը և դրա արդյունքում ԶԳ արտանետումների կրճատմանը (ներդրումների շուրջ 20 տարվա կյանքի ընթացքում՝ 5.1-ից մինչև 5.4 մլն տ CO<sup>2</sup>), կանաչ աշխատատեղերի ստեղծմանը և աղքատության կրճատմանը: Այն կխթանի նաև մասնավոր և հանրային հատվածի կողմից մոտավորապես 100 մլն ԱՄՆ դոլարի լրացուցիչ ֆինանսավորումը:

#### *Ընդհանուր նկարագիրը*

Ծրագիրը շենքերի ԷԱ վերակառուցման առաջ ծառայած շուկայական խոչընդոտները հաղթահարում է քաղաքականության և ֆինանսական ռիսկերի նվազեցման գործիքների համադրության և շուկայի առանցքային խաղացողների, օրինակ՝ շենքի սեփականատերերի և էներգետիկ ծառայություններ մատուցող ընկերությունների (ԷԾՄԸ-ներ) համար նպատակային ֆինանսական արտոնությունների միջոցով: Քաղաքականության, ֆինանսական, շուկայական, տեխնիկական/կարողությունների խոչընդոտները թիրախավորելու միջոցով Ծրագիրն էապես մասշտաբավորելու է Հայաստանում շենքերի ԷԱ արդիականացմանն ուղղված ներդրումները, նվազեցնելու է շենքերի ԷԱ արդիականացման ներդրումային ռիսկերի ամբողջ պատկերը և խրախուսելու է մասնավոր հատվածի ներդրումները:

Ծրագիրը համապատասխանեցված է ԿԿՀ ներդրումային ծրագրի շրջանակին և առաջարկված տարածքային առաջնահերթությունների սխեմային, որտեղ շեշտը դրվում է Արևելյան Եվրոպայում գոյություն ունեցող ենթակառուցվածքների վերազինման և արդիականացման և քաղաքային համակարգերի ամրապնդման ջանքերին աջակցելու զգալի պոտենցիալի վրա:


ՄԱԶԾ-ը կաշխատի կառավարության և մասնավոր հատվածի շահագրգիռ կողմերի, այդ թվում միջազգային ֆինանսական ինստիտուտների հետ, որպեսզի սիստեմատիկաբար բացահայտի քաղաքականության, ֆինանսական, շուկայական և տեխնիկական / կարողությունների ռիսկերի վերացման առավել ծախսարդյունավետ միջոցները՝ նպատակ ունենալով հասնելու շենքերի ԷԱ արդիականացման այն լավագույն ռիսկի-շահույթ հարաբերակցությանը, որը կարող է ներդրումներ գրավել, այդ թվում՝ ազգային բյուջեներից, առևտրային բանկերից և այլ մասնավոր հատվածի շահագրգիռ կողմերից, ինչպիսիք են, օրինակ՝ ԷԾՄԸ-ները:

### 2.2. Ծրագրի բաղադրիչները, ձեռքբերումները և արդյունքները

Այս ծրագրում առանձնացված և թիրախավորված շենքերի հիմնական կատեգորիաները լինելու են հանրային շենքերը և, բնակելի հատվածը՝ առանձնատներ և բազմաբնակարան շենքեր: Երկրի և թիրախավորված շենքերի ենթաուղրոտի առանձնահատուկ պայմաններն ու խոչընդոտները հաղթահարելու նպատակով յուրաքանչյուր թիրախավորված շենքերի ֆոնդի համար համապատասխան քաղաքականության և ֆինանսական ռիսկերի նվազեցման գործիքների փաթեթ է կազմվելու և իրականացվելու:

Ծրագրի գործողությունները կառուցված կլինեն չորս բաղադրիչների շրջանակներում.

- Բաղադրիչ 1 – Շենքերի ոլորտում ՄՀՍ համակարգի ստեղծում և գիտելիքների կառավարում
- Բաղադրիչ 2 – Քաղաքականություն ռիսկերի նվազեցում
- Բաղադրիչ 3 – Ֆինանսական ռիսկերի նվազեցում
- Բաղադրիչ 4 – Ֆինանսական արտոնություններ



Նկար 1. Շենքերի ԷԱ արդիականացման ռիսկերի նվազեցման մոտեցումը

**Բաղադրիչ 1 – Շենքերի ոլորտում ՄՀՍ համակարգի ստեղծում և գիտելիքների կառավարում**

Բաղադրիչ 1-ի նպատակն է շենքերի ոլորտի համար մի ուժեղ ՄՀՍ ստեղծել, որը հնարավորություն կտա շենքերում էներգիայի օգտագործման մոնիտորինգ իրականացնել, ընտրել ԷԱ արդիականացման համար գերակա շենքերը, և որոշել էներգիայի խնայողության արդյունքում ստացված քանակական և դրամական արդյունքները: Ուժեղ ՄՀՍ-ը անհրաժեշտ է ԷԱ արդիականացման ներդրումների պատմությունը կառուցելու համար:

Ծրագիրը կաջակցի ՄՀՍ-ի շրջանակի, այդ թվում՝ շենքերի համար էներգիայի կառավարման տեղեկատվական համակարգերի (ԷԿՏՀ) ստեղծման ՄԱԶԾ-ի փորձի հիման վրա կազմված

ուղեցույցների և մեթոդաբանության մշակմանը: <sup>11</sup> Ծրագիրն, այնուհետև, Ծրագրի վեբ-կայքի և շահագրգիռ կողմերի սեմինարների միջոցով առևտրային բանկերին և պոտենցիալ վարկառուներին տեղեկություններ կտրամադրի ԷԱ արդիականացումից ծախսերի խնայողության պոտենցիալի վերաբերյալ:

### **Արդյունք 1.1 Հայաստանում շենքերի ոլորտի ՄՀՍ համակարգը ստեղծված է**

ՄՀՍ ձեռնարկելու ու էներգիայի խնայողության մասին հաշվետվություն ներկայացնելու նպատակով Բաղադրիչ 1-ի ներքո տեխնիկական օգնություն կցուցաբերվի շուկայի շահագրգիռ կողմերին: Այս տեխնիկական օգնությունը կազմված կլինի հետևյալ միջոցառումներից.

1.1.1 Շենքերի տարբեր կատեգորիաների համար ՄՀՍ շրջանակի, այդ թվում՝ ուղեցույցների և մոնիտորինգի մեթոդաբանության մշակում:

1.1.2 Ցուցադրական և կարողությունների հզորացման նպատակով ընտրված շենքերում շենքերի ԷԿՏՀ լիարժեք իրականացման աջակցություն:

### **Արդյունք 1.2 Գիտելիքները կառավարվում և ՄՀՍ տեղեկությունները տարածվում են**

Շենքերի մասին տեղեկությունների, այդ թվում՝ էներգիայի կառավարման տեղեկատվական համակարգերից (ԷԿՏՀ) ստացված, տարածումը կօգնի շենքերի ԷԱ արդիականացման մասին գործարար պատմության ստեղծմանը:

Հաղորդակցման և տարածման արդյունավետ ռազմավարությունը շատ կարևոր է սույն Ծրագրի շրջանակներից դուրս իրականացվելիք մասշտաբավորման միջոցառումների համար:

Գիտելիքների կառավարման պլանը մանրամասնորեն կորոշվի Ծրագրի մեկնարկի ժամանակ, որը կկազմվի տեղական համատեքստի և Ծրագրի կառավարիչների ու այլ աջակիցների փորձի հիման վրա: Հաղորդակցման և տարածման ռազմավարություն է մշակվելու (դիտարկումների, տեղական շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցության, իրազեկվածության և տեղեկատվության տեսակների կարիքների կարիքների հիման վրա), որը կազմված կլինի հետևյալ միջոցառումներից.

1.2.1 Որոշել համապատասխան շահագրգիռ կողմերին հասնելու հարմար ձևաչափերը.

1.2.2 Վեբ կայք ստեղծել, որը տարբեր շահագրգիռ կողմերի միջև տեղեկատվության և հաղորդակցման հարթակ կտրամադրի և առկա գիտելիքների և հմտությունների փոխանակման միջոցով կբարելավի համագործակցությունը և ուսուցումը:

1.2.3 Տեղեկատվության տարածման ձևաչափեր կմշակվեն, որոնք հիմնված կլինեն դրանց միջոցով իրազեկության բարձրացման, տեղեկությունների մատչելիությունը դյուրացնելու և գործուն ուղենիշների տրամադրման և ոլորտի աջակցության հավանական արդյունավետության վրա

1.2.4 Սպառողներին տեղեկատվության տրամադրումը. տնտեսապես գրավիչ է ԷԱ միջոցառումները հաճախ մնում են չիրագործված, քանի որ շահառուները պարզապես անտեղյակ են նման միջոցառումների գոյության մասին, իսկ տեղյակ լինելու դեպքում էլ, նրանք կարող են ոչ արժանահավատ տեղեկություններ ունենալ: Հետևաբար, առկա է ԷԱ միջոցառումների և դրանց առանձնահատկությունների մասին տեղեկությունների հասանելիությունը այդ հնարավորություններից օգտվելու կարևոր նախապայմանն է:

---

<sup>11</sup> Սերբիայի հանրային հատվածում ՄԱԶԾ առաջին փորձարկված և մասշտաբավորված ԷԿՏՀ, որտեղ ծրագրի շնորհիվ պետական բյուջեից տարեկան մինչև 18 մլն ԱՄՆ դոլար խնայվեց:

## **Քաղաքիչ 2 – Քաղաքականության ռիսկերի նվազեցում**

Քաղաքականության ռիսկերի նվազեցման քաղաքիչը կաջակցի ազգային, ենթազգային և տեղական կառավարման մարմինների կողմից ՀԱ արդիականացմանը նպաստող քաղաքական ծրագրեր ընդունել և իրականացնել: Ռիսկերի նվազեցման գործիքները ուղղակիորեն և անուղղակիորեն կլուծեն առևտրային վարկատուների կողմից ՀԱ արդիականացմանն ուղղված ֆինանսավորման ներդրումային ռիսկերը:

Այս քաղաքիչը կօժանդակի ՀԱ ոլորտի ընթացիկ իրավական բարեփոխումներին: Այն նաև կօժանդակի առկա շենքերում էներգետիկ աուդիտի, անձնագրերի / սերտիֆիկացման և պիտակավորման համար պարտադիր օրենսդրության աստիճանական ներդրմանը: Այս աշխատանքը կհզորացնի ՄԱԶԾ կողմից իրականացված և ԳԷՖ-ի կողմից ֆինանսավորված «Շենքերի էներգետիկ արդյունավետության բարձրացում» Ծրագրի արդյունքները: Քաղաքականություն ռիսկերի նվազեցման գործիքները կազմված կլինեն հետևյալից. արդիականացված շենքերի համար ՀԱ ստանդարտների և ՀԱ պարտադիր չափորոշիչների արդիականացումը և կիրարկումը, ինչպես նաև դրանց առնչվող շինարարական նորմերի և ստանդարտների մոնիտորինգը և կիրարկումը, ՀԱ արդիականացում ձեռնարկելու նպատակով բոլոր բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին հստակ և արդյունավետ ֆունկցիոնալ մոդելների և կանոնների ստանդարտ համալիրի տրամադրման համար համապատասխան ենթաօրենսդրական ակտերի մշակումը, ներդրումը և կիրարկումը, տարբեր տեսակի շենքերի ՀԱ արդիականացման կառավարման օժանդակությանն ուղղված գործող օրենսդրության իրականացումը և կատարելագործումը և ենթաօրենսդրական ակտերի ձևակերպումը, և ՀԱ արդիականացմանն ուղղվող ներդրումներին առնչվող բարդ հարցերում կոլեկտիվ որոշումների կայացման գործում բնակիչների և ընդհանուր բաժնային սեփականությամբ շենքերի կազմակերպություններին աջակցությունը:

### **Արդյունք 2.1 ՀԱ ներդրումների խրախուսման համար հանրային գործիքներն ընտրվել են**

Միջոցառումները բաղկացած կլինեն հետևյալից.

2.1.1. Աջակցություն քաղաքականություն մշակողներին հանրային գործիքներ ընտրելու գործում՝ զարգացող երկրներում կայուն էներգիայի ներդրումներին նպաստելու ՄԱԶԾ-ի ռիսկերի նվազեցման ծրագրի կիրառմամբ:<sup>12</sup>

### **Արդյունք 2.2 Օժանդակություն էներգաարդյունավետության ոլորտի ընթացիկ իրավական բարեփոխումներին**

Տեխնիկական օգնություն օրենսդրական բարեփոխումների համար, ներառյալ՝ շինարարական նորմերը, համապատասխան ենթաօրենսդրական ակտերը, բազմաթիվ սեփականատերերով շենքերի կառավարումը, խնայված միջոցները հանրային շենքերի կողմից տնօրինումը կարգավորող պարտադիր օրենսդրությանը: Միջոցառումները բաղկացած կլինեն հետևյալից.

2.2.1 Աջակցել ազգային, ենթազգային և տեղական կառավարման մարմիններին ՀԱ արդիականացմանը նպաստող քաղաքականության ծրագրեր ընդունել և իրականացնել: 2.1.1 միջոցառման շրջանակներում արված առաջարկությունների առումով, անհրաժեշտության դեպքում, աջակցություն կցուցաբերվի շենքերի արդիականացման համար կիրառելի՝ լրացուցիչ ենթաօրենսդրական ակտերի ընդունմանը: Կապահովվի շենքերի արդիականացման համար նոր շինարարական նորմերի ընդունումը և կիրարկումը:

<sup>12</sup> Waissbein, O., Glemarec, Y. et al. (2013). *De-risking Renewable Energy Investment. A Framework to Support Policymakers in Selecting Public Instruments to Promote Renewable Energy Investment in Developing Countries*. New York, NY: United Nations Development Programme

2.2.2 Օժանդակել առկա շենքերում էներգետիկ աուդիտի, անձնագրերի / սերտիֆիկացման և պիտակավորման համար պարտադիր օրենսդրության աստիճանական ներդրմանը՝ ըստ հստակ և թափանցիկ ժամանակացույցի:

2.2.3. Օժանդակել հատկապես հանրային շենքերին վերաբերող օրենսդրության ներդրմանը:

**Արդյունք 2.3 Բազմաթիվ սեփականատերերով բնակելի շենքերում ԷԱ արդիականացմանը նպաստող քաղաքականության ծրագրի ստեղծման համար տրամադրված օժանդակություն. Տան սեփականատերերի միության (<S) իրավական կարգավիճակ, վճարների գանձում, մասնագիտացված կառավարում, կոնսենսուսի մակարդակներ**

Ծրագիրը կօժանդակի ԷԱ արդիականացում ձեռնարկելու նպատակով բոլոր բազմաթիվ սեփականատերերով շենքերի կառավարման մարմիններին հստակ և արդյունավետ ֆունկցիոնալ մոդելների և կանոնների ստանդարտ համալիրի տրամադրման համար համապատասխան ենթօրենսդրական ակտերի մշակմանը, ներդրմանը և կիրարկմանը: Միջոցառումները բաղկացած կլինեն հետևյալից:

2.3.1 Օժանդակել քաղաքականություն մշակողներին <S-ների իրավական կարգավիճակին, վճարների գանձմանը, մասնագիտացված կառավարմանը, կոնսենսուսի մակարդակներին առնչվող քաղաքականության մշակման գործում:

**Արդյունք 2.4 Շենքերի սեփականատերերին/կառավարիչներին/սեփականատերերի միություններին/ԷՄՄԸ-ներին էներգաարդյունավետ արդիականացման նախագծերի իրավական հարցերին առնչվող օժանդակությունը տրամադրված է՝**

ԷԱ համար կատարված ներդրումների մարման բիզնես մոդելների բացակայությունը մասնավոր հատվածի կողմից հանրային և բնակելի հատվածներում ԷԱ արդիականացման ներդրումների հիմնական խոչընդոտն է համարվում: Մասնավոր հատվածի միջոցով Ծրագիրը ԷԱ արդիականացման հավաքական մոդելներ կգործարկի, ինչպես, օրինակ, ԷՄՄԸ-ների միջոցով և բազմաթիվ սեփականատերերին պատկանող շենքերում սեփականատերերի միությունների նորարարական իրավական կառույցների միջոցով:

Այս արդյունքի շրջանակում հիմնական միջոցառումներ կլինեն.

2.4.1 Բազմաթիվ սեփականատերերին պատկանող շենքերում ԷԱ արդիականացման նախագծերի իրավական հարցերին առնչվող օժանդակություն տրամադրել:

2.4.2 Աջակցել ԷՄՄԸ-ների ստեղծմանը. ԷԱ առնչվող ներկայիս օրենսդրությունը ամբողջությամբ չի օժանդակում ԷՄՄԸ-ների ձևաչափին և Հայաստանում լիարժեք գործող էներգետիկ ծառայություններ մատուցող ընկերությունների չկան:<sup>13</sup> Որպես ԷՄՄԸ մի տեսակի օրինակ, որը ներկայումս ՄԱԶԾ օգնությամբ կազմակերպվում է Երևանում, կարող է ծառայել հատուկ հաշիվը (հիմնադրամը), որտեղ կկուտակվեն էներգախնայող լուսավորության ներդրումներից առաջացող խնայված միջոցները և այդ գումարները հետագայում կօգտագործվեն ԷԱ նոր ծրագրերի նպատակային ֆինանսավորման համար:

**Արդյունք 2.5 Ներդրումների ետզնման ռազմավարական միջոցառումներն իրականացվել են**

ԿԿՀ Ծրագիրը կօգնի հաղթահարել Հայաստանում հանրային և բնակելի շենքերի ԷԱ արդիականացման առաջ կանգնած համակարգային խոչընդոտները, և դրա ազդեցությունը

<sup>13</sup> *Final Report: Energy Efficiency Orbits for Transition Economies*, Prepared for: Copenhagen Centre on Energy Efficiency (C2E2), 2015.

դուրս կգա ԿԿՀ ֆինանսավորման սահմաններից: Բացի այդ, հանրային շենքերին տրվող ֆինանսական արտոնությունները նախատեսվում են լուծել առաջնահերթ խոչընդոտները, սակայն, հանրային շենքերում ԷԱ արդիականացման ներդրումները, ընդհանուր առմամբ, ֆինանսապես կենսունակ դառնալուց հետո, հավանաբար, հետագա արտոնությունների անհրաժեշտություն չի առաջանա: Սակայն մյուս կողմից, եթե բնակելի շենքում, որտեղ շենքի վերակառուցման ֆինանսական կենսունակությունը հիմնական շարժիչ ուժը չէ, և որտեղ տնային տնտեսության աղքատությունը զգալի խոչընդոտ է հանդիսանում, ապա կարիքավոր տնային տնտեսություններին ուղղված շարունակական ֆինանսավորման անհրաժեշտություն կլինի, ամենայն հավանականությամբ, նաև Ծրագրի ավարտից հետո: Գոյություն ունեցող սոցիալական աջակցության մեխանիզմների միջոցով աշխատելու ռազմավարությունը նպատակ ունի ապահովել, որ Հայաստանի սոցիալական ապահովության ներքին ֆինանսավորումն իր վրա վերցնի այդ աջակցության հերթափոխը:

Երկարաժամկետ կայունությանն աջակցող այդ բոլոր առանցքային տարրերն ընդգրկված են Ծրագրի տեխնիկական լուծումների մեջ: Այս արդյունքին նպաստող միջոցառումները հետևյալն են.

2.5.1 Ներդրումների ետգնման ռազմավարության մշակում և իրականացում. Ծրագրի ձեռքբերումների և արդյունքների երկարաժամկետ և ֆինանսապես կայուն շարունակությունը Ծրագրի ավարտից հետո ապահովող միջոցառումները ի հայտ կբերվեն, կքննարկվեն շահագրգիռ կողմերի հետ և կիրականացվեն մինչև Ծրագրի ավարտը:

### ***Բաղադրիչ 3 – Ֆինանսական ռիսկերի նվազեցում***

ԷԱ արդիականացման համար մատչելի կապիտալի հասանելիությունն ապահովելու նպատակով ֆինանսական ռիսկերի նվազեցման մի բաղադրիչը կաշխատի ԵՆԲ-ի, տեղական բանկերի և այլ համապատասխան ազգային և միջազգային ֆինանսական հաստատությունների հետ համագործակցությամբ: Ռիսկերի նվազեցման այդ գործիքներն արտահայտված կլինեն մի քանի ձևով, այդ թվում՝ ֆինանսական ինստիտուտների կողմից տրամադրվող վարկային գծեր և / կամ վարկային երաշխիքներ, որոնք տեղական առևտրային բանկերին կխրախուսեն մասնավոր ԷՏՄԸ-ներին և / կամ շենքի սեփականատերերին վարկեր տրամադրել: Վարկերի դիմաց չափազանց բարձր տոկոսադրույքների դեպքում (այսօրվա առևտրային վարկերի տոկոսադրույքները տարեկան շուրջ 22% են, իսկ մարման ժամկետը՝ 5 տարի)՝ այդ վարկերը կարող են արտոնյալ տոկոսադրույքներ ունենալ: ՄԱԶԾ-ը Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԲ) հետ մի համաձայնագիր է բանակցել հանրային և բնակելի հատվածին ԷԱ արդիականացման արտոնյալ /փափուկ/ վարկեր տրամադրման համար: Այս պայմանավորվածությունը հիմք կհանդիսանա Հայաստանում շենքերի ԷԱ արդիականացման նպատակով ԵՆԲ կողմից առևտրային վարկերի տրամադրման համար (առևտրային պայմանները համաձայնեցվելու են Ծրագրի իրականացման ընթացքում՝ շուկայում տիրող իրավիճակի և կարիքների հիման վրա): Ծրագրի մյուս արդյունքների և բաղադրիչների համար ԿԿՀ ֆինանսական միջոցները չափազանց անհրժեշտ են, որպեսզի այդ վարկերը հաջողությամբ ներդրվեն: Այս բաղադրիչում նախատեսվում է նաև տեխնիկական օգնություն տրամադրել տեղական առևտրային բանկերին՝ իրենց վարկային արտադրանքը մշակելու, ներդրումները գնահատելու և ծրագրերի գործիքները զարգացնելու համար: Եվ վերջում, շենքերի ԷԱ արդիականացման ֆինանսավորման փաթեթների առկայության մասին Ծրագրի վեբ կայքի միջոցով տեղեկություններ կտրամադրվեն շուկայի շահագրգիռ կողմերին:

### **Արդյունք 3.1 Առանձին բնակարանների շուկայի դյուրացման համար բանկերին և այլ ֆինանսական ինստիտուտներին տեխնիկական օգնությունը տրամադրվել է**

3.1.1 Բանկերին աջակցել առանձին բնակարաններում ԷԱ վարկային գործիքներ մշակելու և դրանք շուկա հանելու գործին: Դրանում կներառվեն բանկերի համար ներդրումների

գնահատման (այդ թվում՝ ռիսկերի գնահատման) և ծրագրային առաջարկների փաթեթների մշակման թեմաներով վերապատրաստումը և գիտելիքների փոխանցումը:

### **Արդյունք 3.2 Համատիրությունների (ՀՏ) շուկայի դյուրացման համար բանկերին տեխնիկական օգնությունը տրամադրվել է**

Քանի որ Հայաստանում ՀՏ-ների վարկավորման իրական շուկա չկա, ապա տեխնիկական աջակցություն կտրամադրվի բանկերի կողմից բազմաթիվ սեփականատերերին պատկանող շենքերի համար վարկային առաջարկներ ներդնելու ստանդարտ գործառնական ընթացակարգերի սահմանման համար, և աջակցության մի խորացված փաթեթ կտրամադրվի ՀՏ-ների վարկավորման գործիքների մշակման համար: Ծրագիրը նաև կաշխատի բնակչահագործման ընկերությունների և մոնտաժողների/մատակարարների հետ, որոնք կարող են հանդես գալ որպես ՀՏ-ները վարկային գործիքներին միացնելու օգնականներ: Շեշտը դրվելու է ոչ թե նոր կազմավորվող ՀՏ-ների, այլ արդեն գործող ՀՏ-ների որակավորման զարգացման վրա:

Այս արդյունքին հասնելուն նպաստող միջոցառումներն են.

3.2.1 Օժանդակել ՀՏ-ների համար բանկային գործիքների մշակման գործում.

### **Արդյունք 3.3 Հանրային սեփականություն հանդիսացող շենքերում ԷԱ արդիականացման նախագծեր մշակելու նպատակով ՏԻՄ-երին տեխնիկական օգնությունը տրամադրվել է**

Այս արդյունքին հասնելուն նպաստող միջոցառումներն են.

3.3.1 Աջակցություն հանրային սեփականություն հանդիսացող շենքերում տեխնիկապես և ֆինանսապես իրագործելի ԷԱ արդիականացման նախագծերի ի հայտ բերման, մշակման և միասնականացման գործընթացին: Քանի որ էներգետիկ ծախսերը հանրային շենքերի տարեկան ծախսերում մեծ տեսակարար կշիռ են կազմում, ապա, հաշվի առնելով տեխնիկական հնարավորությունների և ֆինանսավորման տարբերակների վերաբերյալ տեղեկատվություն առկայությունը, այդ շենքերի շահագործողները պետք է խստորեն շահագրգռված լինեն ԷԱ արդիականացման ներդրումներ կատարել:

Նման ծրագրերին օժանդակող մեխանիզմի օրինակը Երևանի քաղաքապետարանի լուսավորման համակարգերի ԷԱ բարելավման համար ստեղծված հատուկ նշանակության հիմնադրամն է: Այս հիմնադրամը ստեղծվում է որպես ՄԱԶԾ-ԳԷՖ «Քաղաքային կանաչ լուսավորություն» Ծրագրի արդյունքներից մեկը:

### **Արդյունք 3.4 Էներգաարդյունավետ արդիականացման համար մատչելի կապիտալի հասանելիությունն ապահովված է**

ՄԱԶԾ կհամագործակցի ազգային և միջազգային Ֆինանսական ինստիտուտների հետ, որոնք այնուհետև, իրենց հերթին ֆինանսական ռիսկերի նվազեցման գործիքներ, օրինակ՝ շենքերի ԷԱ արդիականացման համար վարկային գծեր, վարկային երաշխիքներ և պետական արժեթղթեր կառաջարկեն տեղական Ֆինանսական ինստիտուտներին, օրինակ՝ բանկերին: Հանրային շենքերում ներդրումների համար վարկերը ուղղակիորեն տրամադրվում են քաղաքային իշխանություններին: Ելնելով առևտրային վարկերի ներկայիս բարձր տոկոսադրույքներից և դրանց մարման կարճ ժամկետներից, ֆինանսական ռիսկերի նվազեցման գործիքները արտահայտված կլինեն միայն արտոնյալ պայմաններով վարկերով:

Միջոցառումները բաղկացած կլինեն հետևյալից:

3.4.1 Ռիսկերի նվազեցման գործիքների համար տեխնիկական կառուցվածքի ստեղծումը և վարումն առաջարկվել է:

3.4.2 Ֆինանսավորված ներդրումների ստուգում:



### **Արդյունք 3.5 Շուկայավարման (մարքեթինգային) հարթակը ստեղծվել է**

ԷԱ արդիականացման առավելությունների մասին շուկայավարման նյութեր և ընդհանուր ապրանքանիշ / շուկայական հարթակ մշակել, այդ թվում՝ հրապարակել շենքերի ԷԱ արդիականացման ֆինանսավորման փաթեթների արդյունքները և դրանց առկայությունը:

Այս արդյունքին հասնելուն նպաստող միջոցառումներն են.

3.5.1 Շուկայավարման օժանդակություն տրամադրել բանկերին (այդ թվում՝ ՍԵՖ Ինտերնեյշնլին, ԱԿԲԱ բանկ, Ամերիա, Բիբլոս Բանկ, Արարատ բանկ, և Ինեկո բանկ).

### **Բաղադրիչ 4 – Ֆինանսական արտոնություններ**

Նպատակային ֆինանսական արտոնություններ կտրամադրվեն և կառաջարկվեն նաև շենքերի/ բնակարանների սեփականատերերին կամ այդ հաճախորդներին սպասարկող ԷԾՄԸ-ներին՝ ապահովելով, որ առավել խոցելի տնային տնտեսությունները կարողանան իրենց թույլ տալ ԷԱ արդիականացման ծախսեր կատարել: Հայաստանի քաղաքային բնակավայրերում տիրող համատարած աղքատության և գերակշռող անհավասարության իրավիճակի պատճառով տնային տնտեսությունների առնվազն մեկ հինգերորդը, հաշվի առնելով նրանց եկմուտը, չի կարողանում իրեն թույլ տալ ողջամիտ գնով տաքացնել տները: Այդպիսի տնային տնտեսությունները, իհարկե, չեն կարող իրեն թույլ տալ միանգամից կատարել ԷԱ արդիականացման ծախսերը և, հետևաբար, մատչելիության այդ բացը լրացնելու և ԷԱ արդիականացման պահանջարկը խթանելու նպատակով խոցելի խմբերի համար ուղղակի նպատակային արտոնություններ են անհրաժեշտ: Մեր ֆինանսական վերլուծությունը (Հավելված 17) ցույց է տալիս, որ հիմնական ջերմարդիականացման դիմաց բնակիչների կողմից վարկի ամսեկան մարումը կազմում է Հայաստանում միջին եկամտի (\$400) 11.4%-ից մինչև 39.6%-ը՝ դրամաշնորհները բոլոր վարկառուներին հավասարաչափ տրվելու դեպքում: Այսպիսով, ջերմարդիականացման համար տրվող վարկերը նրանց վճարունակության սահմաններից դուրս են: Դրամաշնորհները կաջակցեն աղքատ ու խոցելի տնային տնտեսություններին հասնելու բարելավված ջերմային հարմարավետությանը և խնայել ծախսերը / էներգիան:

### **Արդյունք 4.1 Մատչելիության բացերը լրացնելու նպատակով խոցելի խմբերին ֆինանսական արտոնությունները տրամադրվել են**

4.1.1 Շենքերի/ բնակարանների սեփականատերերին կամ այդ հաճախորդներին սպասարկող ԷԾՄԸ-ներին տրամադրված նպատակային ֆինանսական արտոնություններ: Այդ արտոնությունները սկզբում կտրամադրվեն ԿԿՀ-ի կողմից, սակայն Ծրագրի ընթացքում՝ արդյունք 2.1- ի ներքո կատարված քաղաքականություն աշխատանքների շնորհիվ, դրանք առավելապես կփոխարինվեն տեղական արտոնություններով:

### **2.3.Ծրագրի ֆինանսական տարրերը**

#### **Ֆինանսավորման կառուցվածքը**

Ստորև բերված աղյուսակում նկարագրում է Ծրագրի ֆինանսական կառուցվածքը:

**Առաջարկված ֆինանսական կառուցվածքը**

Բաղադրիչ	Ֆինանսավորողներ	Անհրաժեշտ ֆինանսավորումը (հազար ԱՄՆ դոլար)
Ներդրում	ԿԿՀ	14,000
	Երևանի քաղաքապետարան	8,000
	Ընդամենը	22,000
Տեխնիկական օգնություն	ԿԿՀ	6,000
	ՄԱԶԾ	1,420
	ՀՀ ԲՆ	400
	Ընդամենը	7,820
Ծրագրի ընդհանուր արժեքը		29,820

Արժույթի փոխարժեքի փոփոխության ռիսկերի /հեջավորման/ մեխանիզմը.

Արժույթի փոխարժեքի փոփոխության ռիսկերի ՄԱԶԾ մեխանիզմը հիմնված ոչ-ԱՄՆ դոլարով արժույթների դրամական հոսքերի (այսինքն՝ եկամուտների և ծախսերի) համապատասխանեցման վրա և ռիսկը նվազագույնի հասցնելու նպատակով նախատեսում է, որ բանկային հաշիվների մնացորդները չգերազանցեն մոտ մեկ ամսվա հատկացման պահանջները:

**Այն մասին, թե ինչպես է ֆինանսական գործիքների ընտրությունը հաղթահարելու խոչընդոտները, հասնելու Ծրագրի նպատակներին և լրացուցիչ հանրային և / կամ մասնավոր ֆինանսավորում է փոխառելու:**

Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԲ) հետ համագործակցության, մասնավոր հատվածի խաղացողների ներգրավման և կառավարության ու ՄԱԶԾ-ի ֆինանսավորման միջոցով Ծրագիրը զգալի ծավալի լրացուցիչ ռեսուրսներ է ներգրավելու՝ դրամաշնորհ, պարտք և կապիտալ: Ընդհանուր առմամբ, 20 մլն ԱՄՆ դոլարի ԿԿՀ ֆինանսավորումը մասնավոր հատվածից (բնակիչներ, կապիտալ, և վարկերի մարում) փոխառության տեսքով 80 մլն ԱՄՆ դոլարի ներդրումներ և 20 մլն ԱՄՆ դոլարի հանրային (քաղաքապետարանից, կապիտալից և վարկերի մարումից) ներդրումներ կներգրավի ԷԱ արդիականացման մեջ: Եվ, դրան կավելացվի ՀՀ բնապահպանության նախարարության 0,4 մլն ԱՄՆ դոլարի ֆինանսավորումը և լիազորված մարմնի՝ ՄԱԶԾ-ի կողմից 1.42 մլն ԱՄՆ դոլար կտրամադրվի որպես համաֆինանսավորում, որի դեպքում ընդհանուր համաֆինանսավորման հարաբերակցությունը կլինի ավելի քան 1: 5:

ԿԿՀ 20 մլն ԱՄՆ դոլարի դրամաշնորհներից 6 մլն ԱՄՆ դոլարը օգտագործվելու է շենքերի ԷԱ արդիականացման շուկայի և քաղաքականություն խոչընդոտները հաղթահարելու տեխնիկական օգնության (Բաղադրիչներ 1, 2 և 3) համար, 14 մլն ԱՄՆ դոլարը՝ արտոնությունների (Բաղադրիչ 4) և շենքերի ԷԱ արդիականացման վարկերն ավելի մատչելի դարձնելու միջոցով խոցելի տնային տնտեսությունների կարիքները հոգալու և ֆինանսական խոչընդոտները վերացնելու համար:

1, 2 և 3 բաղադրիչներում նախատեսվող տեխնիկական օգնությանը դրամաշնորհների կարիք ունի, քանի որ դրանց միջոցով զբաղվելու և հեռացվելու են համակարգային ռիսկերը և հաղթահարվելու են շուկայի խոչընդոտները:

Բաղադրիչ 4-ում ԿԿՀ-ի դրամաշնորհները տրամադրվելու են որպես ժամանակավոր նպատակային արտոնություններ: Դա այնպես կարվի, որպեսզի հոգա ամենախոցելի տնային տնտեսությունների կարիքները: Ֆինանսական վերլուծությունը (Հավելված 17) ցույց է տալիս, որ միջին տնային տնտեսություն 400 ԱՄՆ դոլարից ցածր եկամուտ ունեցողների համար շենքի

արդիականացումը մատչելի չէ: Միջին և բարձր եկամուտով տնային տնտեսությունները մատչելիության տեսակետից դրամաշնորհների կարիք չունեն, և դրանք զուտ օգտագործվելու են ցածր մակարդակով վաղ մեկնարկի խոչընդոտները հաղթահարելու համար: Դրամաշնորհներն աջակցելու են աղքատ և խոցելի տնային տնտեսություններին, որը նրանց համար բարելավված ջերմային հարմարավետության և ծախսերի/էներգիայի խնայողության մատչելիություն կապահովի: Բնակելի հատվածի խոցելի տնային տնտեսություններին աջակցելու համար ընդհանուր առմամբ 12.5 մլն ԱՄՆ դոլարի խրախուսական դրամաշնորհներ կտրամադրվեն:

Հանրային հատվածում փոքր արտոնությունները (ընդամենը մոտ 1.5 մլն ԱՄՆ դոլար) նույնպես արդարացված են՝ ելնելով ‘սովորական գործելակերպից’ ավելի բարձր էԱ հավելյալությունից: Բացի հավելյալությունից, այդ համեստ արտոնությունը կարող է նաև ծառայել շենքերի վերականգնումն արագացնելու նպատակին՝ դրանով իսկ բարելավելով հանրային հաստատություններից, օրինակ՝ հիվանդանոցներից և մանկապարտեզներից օգտվող տնային տնտեսությունների կյանքի որակը:

### 3. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

#### 3.1. Ակնկալվող արդյունքները

Բարելավված ԷԱ-ի և ցածր էներգատարությամբ շենքերի շնորհիվ Ծրագիրը կհասնի ջերմոցային գազերի արտանետումների մեծ կրճատումների: Ըստ Երևանում իրականացված ՄԱԶԾ պիլոտային ծրագրի<sup>14</sup> փորձի և էներգասուղիտից ստացված ապացույցների՝ շենքերում մինչև 60% էներգիայի սպառման / ՋԳ արտանետումների ծախսարդյունավետ կրճատման կարելի է հասնել.

- ընդամենը տարեկան կրճատված CO<sub>2</sub><sub>հաւ.</sub> ծավալը - տոննա՝ ԷԱ միջամտությունների 20 տարվա կյանքի ընթացքում գնահատված 69 484 տCO<sub>2</sub> տարեկան, կամ 1.4 մլն տCO<sub>2</sub>,
- այդ թվում՝ ուղղակի և գնահատված անուղղակի արտանետումների խնայողություն՝ ԷԱ միջամտությունների 20 տարվա կյանքի ընթացքում ընդամենը կհասնի 5.6-ից մինչև 5.8 մլն տCO<sub>2</sub>,
- ուղղակի շահառուների սպասվող ընդհանուր քանակը՝ 210 000:

ԿԿՀ Ծրագրի ընդհանուր ազդեցությունները ամփոփված են ստորև՝ Աղյուսակ 2-ում:

#### Աղյուսակ 2. Ծրագրի ազդեցության ամփոփ պատկերը

Շենքի տեսակը	Մեկ արդիականացման միջին արժեքը (ԱՄՆ դ.)	Դրամաշնորհի միջին մակարդակը (%)	Էներգիայի խնայողություն (Գ-Լոսժ/տարի)	ՋԳ խնայողություն (տCO <sub>2</sub> <sub>հաւ.</sub> / տարի)	Շենքերի քանակը	Դրամաշնորհի ընդհանուր գումարը (ԱՄՆ դ.)	Ընդամենը ներդրում (ԱՄՆ դ.)	Կյանքի ընթացքում ՋԳ խնայողություններ (CO <sub>2</sub> <sub>հաւ.</sub> , 20 տարի)
Առանձնա տներ	10,000	9%	110.3	27,239	6,000	5,400,000	60,000,000	544,783
Բազմաբնակարան բնակելի շենքեր	120,000	22%	93.1	22,997	290	7,656,000	34,800,000	459,942
Հանրային շենքեր (մեծ, օր.՝ հիվանդանոցներ)	250,000	5%	7.7	5,005	23	287,500	5,750,000	100,093
Հանրային շենքեր (փոքր, օր.՝ դպրոցներ)	95,000	8%	53.2	14,243	150	1,140,000	14,250,000	284,860
<b>Ընդամենը</b>			<b>264.3</b>	<b>69,484</b>	<b>6,463</b>	<b>14,483,500</b>	<b>114,800,000</b>	<b>1,389,677</b>

<sup>14</sup> 2013-2014թթ. ՄԱԶԾ-ը ԳԷՖ-ի ֆինանսական աջակցությամբ իրականացրել է Հայաստանի Հանրապետությունում առաջին լայնածավալ ջերմարդիականացման նախագիծը՝ Երևանի մի տիպային պանելային շենքում: Նախագծի ամբողջական արդյունքները, ներառյալ՝ տեխնիկական, տնտեսական և բնապահպանական իրագործելիությունը ներկայացված են ամբողջական փաստաթղթի IIա Հավելվածում:

## **Ուղղակի և անուղղակի շահառուների ակնկալվող ընդհանուր քանակը (նվազեցված խոցելիությամբ կամ ավելացված տոկոսությամբ)**

Ծրագրի ուղղակի շահառուների քանակը (ովքեր՝ Ծրագրի ավարտից հետո, ներդրումների կենսափուլի ընթացքում շարունակում են օգուտներ ստանալ) հաշվարկվում է միջին տնային տնտեսության 5 անդամի և մեկ բազմաբնակարան շենքում 36 բնակարանների հաշվով:<sup>15</sup> Հանրային շենքերի պարագայում շահառուների քանակն ընդունվում է որպես շենքի մշտական աշխատակիցների միջին քանակը, օր.՝ հիվանդանոցի պարագայում՝ դա հիվանդանոցի անձնակազմն է, այլ ոչ թե ժամանակավոր օգտվողները (հիվանդները):

## **Մասշտաբավորման ու ընդօրինակման փոփոխությունների տեսության միջոցով՝ ակնկալվող նպաստը գլոբալ ցածր ածխածնային և/կամ կլիմայի նկատմամբ դիմակայուն զարգացման ուղիներին**

Ծրագիրը կհանգեցնի ներդրողների կողմից ԷԱ արդիականացմանն ուղղված ներդրումների ընկալման հարացույցի տեղաշարժին, որը, ներկայումս, դիտվում է որպես չափազանց ռիսկային և մասնավոր հատվածի համար անհրապույր:

Ծրագրի արդյունքների շղթան հիմնված է հանուն ԷԱ՝ շուկայի վերափոխման ՄԱԶԾ մոտեցման վրա: Այս մոտեցումը հիմք է ընդունում այն իրողությունը, որ, ԷԱ ներդրումների սկզբնական բարձր կապիտալատարությամբ պայմանավորված, մեծ քանակությամբ ցածր արժեքով ֆինանսավորման հասանելիությունն ԷԱ շուկաների ծախսարդյունավետ վերափոխման համար չափազանց կարևոր է: Փոփոխությունների տեսություն հիմնական տարրերն են՝ աջակցել կառավարություններին հանրային գործիքների փաթեթներ կազմել, որոնք. (i) լուծում են ոչ ֆինանսական այն խոչընդոտները, որոնք արգելափակում են ներդրումների պահանջարկը, և (ii) ռիսկերի նվազեցման, փոխանցման կամ փոխհատուցման միջոցով գրավիչ ռիսկ-շահույթ իրավիճակ են ստեղծում:

## **3.2. Համագործակցություն և շահագրգիռ կողմերի ներգրավվածություն**

### **Շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունների ամփոփ ակնարկ**

ՄԱԶԾ-ը շահագրգիռ կողմերի հետ երկարատև և շարունակական խորհրդատվությունների գործընթաց է հաստատել տարբեր շահագրգիռ կողմերի շրջանում, որն ընդգրկում է պետական գերատեսչությունները, ՀԿ-ները և այլ զարգացման գործակալություններն ու Ծրագրի պոտենցիալ շահառուները: Ծրագրի նախապատրաստման ընթացքում շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունները կայացել են նաև դեմ-առ-դեմ հանդիպումների միջոցով: Առկա ՄԱԶԾ-ի ԷԱ շենքերի և ԷԱ լուսավորության նախագծերի գործողությունների և ՀՀ բնապահպանության նախարարության կողմից համակարգվող և այնտեղ տեղակայված՝ լավ հիմնադրված ՄԱԶԾ Կլիմայի փոփոխության ծրագրերի գրասենյակի միջոցառումների միջոցով պետական գերատեսչությունները տեղեկացված են եղել և մասնակցել են շենքերի ԷԱ արդիականացման ծրագրին վերաբերող շարունակական քննարկումներին: ԷԱ արդիականացման նախագծերում ներգրավված պետական այլ գերատեսչություններն են՝ ՀՀ ԿԱ քաղաքաշինական պետական կոմիտե, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը և ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը, Ստանդարտների ազգային ինստիտուտը, ՀՎԷԷՀ հիմնադրամը, Էներգետիկայի

<sup>15</sup> Այս ենթադրությունները հիմնված են Երևանում իրականացված պիլոտային ծրագրի հատկանիշների վրա, որն իրենից ներկայացնում է տիպային, բազմաբնակարան բնակելի շենք (ՀՀ-ում առկա է 4300 նման շենք):

գիտահետազոտական ինստիտուտը և Ճարտարապետության և շինարարության Հայաստանի պետական համալսարանը:

Դեմ առ դեմ հանդիպումների միջոցով խորհրդակցություններ են իրականացվել ՄԱԶԾ-ի ԷԱ շենքերի ընթացիկ ծրագրում ներգրավված քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ, նույնպես, այդ թվում՝ Հայաստանի շինարարների միությունը և Հայաստանի ճարտարապետների միությունը, Խնայել էներգիան հիմնադրամը, Զարգացման լուծումների ինստիտուտ հիմնադրամը, «Երրորդ Բնություն» ՀԿ-ը, «Հաբիթաթ Ֆոր Հյումենիթի Արմենիա» հիմնադրամը և «Ազգային սոցիալական բնակարանային ասոցիացիա» հիմնադրամը: Ոչ պաշտոնական քննարկումներ են կայացել նաև Ծրագրի պոտենցիալ շահառուների հետ, որոնք ի հայտ են բերվել Հայաստանում ՄԱԶԾ-ի ընթացիկ միջոցառումներում ներգրավվածության շնորհիվ:

### **Ինստիտուցիոնալ կառուցվածքը**

#### **Աղյուսակ 3. ԷԱ քաղաքականության լիազորություններով օժտված պետական գերատեսչություններ**

<b>Մարմին</b>	<b>պատասխանատվություն</b>
ՀՀ Կառավարություն	Պատասխանատու է օրենքների, այդ թվում՝ էներգախնայողության և ԷԱ կանոնակարգերի կիրարկման համար
Բնապահպանության նախարարություն	Երկրում համակարգում է կլիմայի փոփոխության ծրագրերը
Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության	Զբաղվում է ռազմավարական նպատակների, այդ թվում՝ ազգային նախագծերի, ծրագրերի և օրենսդրության մշակման միջոցով ԷԱ իրականացման լայն շրջանակով,
Քաղաքաշինական պետական կոմիտե	Կարգավորում շինարարության գործունեությունը, այդ թվում՝ ջերմամեկուսացման և շենքերի ԷԱ ստանդարտները
	Շինարարական նորմերի ստանդարտների սահմանում և կիրարկում
Ազգային վիճակագրական ծառայություն	պատասխանատու է վիճակագրական տեղեկատվության, այդ թվում՝ վառելիքի և էներգիայի սպառման մասին տվյալների, սակագների, շենքերի մակերեսների և այլն համար
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության ներքո Ստանդարտների ազգային ինստիտուտ	Լիցենզավորում է սերտիֆիկացման և պիտակավորման անկախ մարմիններին
ՀՎԷԷՀ	Հիմնադրամը ստեղծվել է 28.04.2005թ. ՀՀ կառավարության No.799-Ն որոշման համաձայն: Հիմնադրամի առաքելությունն է հեշտացնել էներգետիկայի ոլորտում ներդրումները: Այն համապարփակ աջակցություն է տրամադրում նախագծեր մշակողներին, ներդրողներին, բանկերին, հետազոտողներին և այլն, և կառավարությանը էներգիայի հարցերին առնչվող փորձագիտություն է տրամադրում: Հիմնադրամը նաև վերականգնվող հիմնադրամ է ստեղծել, որը բանկերի կամ ուղղակի վարկային պայմանագրերի միջոցով ֆինանսավորում է էներգետիկ նախագծեր:
Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով	Կարգավորում է Հայաստանի էներգետիկ շուկան և էներգետիկ ռեսուրսների արդյունավետ օգտագործումը խրախուսող մի շարք ծրագրեր է իրականացնում

**Շահագրգիռ կողմեր և դերեր**

Պետական և մասնավոր հատվածի շահագրգիռ կողմերի ցանկը ներկայացված է 4-րդ Աղյուսակ 4ում:

**Աղյուսակ 4. Ծրագրի շահագրգիռ կողմերի ընդհանուր նկարագիրը և իրականացման մեջ նրանց մասնակցության առաջարկը**

Շահագրգիռ կողմերի կատեգորիան	Անվանումը	Ծրագրի հետ առնչությունը
Կառավարություն	ՀՀ Բնապահպանության նախարարություն	Ծրագրի իրականացնող գործընկերը և ԿԿՀ-ի ԼԱՄ-ը: Իր լիազորությունների շրջանակում նախարարությունը պատասխանատու է կլիմային առնչվող բոլոր նախագծերի և ծրագրերի համակարգման, ինչպես նաև ՋԳ արտանետումների մոնիտորինգի համար:
	ՀՀ Կառավարությանը կից Քաղաքաշինական պետական կոմիտե	ԷԱ շենքերին և արդիականացմանն առնչվող օրենքների և կանոնակարգերի մշակման և հզորացման համար տեխնիկական օգնություն ստացողն է: Նաև պատասխանատու է նորակառույց շենքերի նորմերի և ստանդարտների նախագծման և կիրարկման, և բնակելի շենքերի կառուցման և վերակառուցման վերահսկողությունն իրականացնելու համար:
	ՀՀ ԿԱ Քաղաքաշինական պետական կոմիտեի Քաղաքաշինության պետական տեսչություն	ԷԱ շենքերին և արդիականացմանն առնչվող օրենքների և կանոնակարգերի մշակման և հզորացման համար տեխնիկական օգնություն ստացողն է: Տեսչությունը, մասնավորապես, կշահի կիրարկման կարողությունների հզորացման համար տրամադրված աջակցությունից:
	ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն	ԷԱ սերտիֆիկացման սխեմաների (Էներգետիկ անձնագրեր) իրավական հիմքերի, մեթոդաբանության և ընթացակարգերի կիրարկում:
	Ստանդարտներ ազգային ինստիտուտ	ԷԱ նյութերի սերտիֆիկացման և պիտակավորման ոլորտի անկախ մարմինների լիցենզավորման համար ընթացակարգերի մշակում:
	Քաղաքապետարաններ և ենթազգային մարմիններ	Հողօգտագործման պլանավորման և գոտիավորման ոլորտում, մասնավորապես ԷԱ շենքերի նկատառումները տեղական որոշումների կայացման մեջ ինտեգրելու համար կարողությունների հզորացում է տրամադրվում
Մասնավոր հատված	Առևտրային բանկեր օր.՝ ՍԷՖ Ինտերնեյշնլ, ԱԿԲԱ բանկ, Ամերիա, Բիբլոս Բանկ, Արարատ բանկ, և Ինելո բանկ	Շենքերի ԷԱ արդիականացման ֆինանսական փաթեթների մշակման համար տեխնիկական օգնություն ստացողներն են: Տարբեր ներդրումային ծրագրերի ներքո Շենքերի ԷԱ արդիականացման համար ֆինանսավորում կտրամադրեն:
	ԷԾՄԸ-ներ	Ֆինանսավորման փաթեթների մշակման և բանկի կողմից ընդունելի ԷԱ արդիականացման ներդրման հնարավորությունների խողովակի մշակման համար տեխնիկական օգնություն ստացողներն են:
	Տների սեփականատերեր /կառավարիչներ/համատիրություններ	Շենքերի ԷԱ արդիականացման համար կանխավճարներ են կատարում, և նպաստում են բանկի կողմից ընդունելի ԷԱ արդիականացման ներդրման հնարավորությունների խողովակի մշակմանը:

Շահագրգիռ կողմերի կատեգորիան	Անվանումը	Ծրագրի հետ առնչությունը
	արդիականացման նախագծերում մասնակցող ընկերություններ	Ընկերություններ, որոնք ինժեներական նախագծման և շինարարական ընկերություններ և նյութերի մատակարարներ, որոնք, ըստ էության կատարում են արդիականացման ծրագրերը:
Հայաստանյան այլ կազմակերպություններ	Հայաստանի շինարարների միություն և Հայաստանի ճարտարապետների միություն	Գովազդային նյութերի մշակում, ցուցահանդեսներ, աջակցություն հրապարակման գործում, նորմատիվ փաստաթղթերի և ստանդարտների ընդունման լոբբինգ, իրազեկության բարձրացում:
	Ազգային հիփոթեքային ընկերություն	Տարբեր ներդրումային ծրագրերի, մասնավորապես, KfW բանկի վարկային պայմանագրի ներքո շենքերի ԷԱ արդիականացման համար ֆինանսավորում կտրամադրեն:
	Համալսարաններ	Օժանդակում են դասերի քաղման միջոցառումներին և ակադեմիական դասընթացներ են վարում:
	ՀԿ-ներ	Իրազեկության բարձրացման միջոցառումներ: Մի շարք ՀԿ-ներ, այդ թվում՝ ԷԱ նախագծերում մասնագիտացված Խնայել էներգիան հիմնադրամը, Զարգացման լուծումների ինստիտուտ հիմնադրամը, Երրորդ Բնությունը, Կանաչների միությունը, Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Արմենիա հիմնադրամը և Ազգային սոցիալական բնակարանային ասոցիացիան, և միջազգային ՀԿ-ներ՝ Altair (Մարդասիրական կենտրոն), որը մասնագիտացված է կենսամակարդակի բարելավման գործում:
	ՀՎԷԷՀ	Հիմնադրամը պատասխանատու է վերականգնվող էներգետիկայի և ԷԱ մի շարք նախագծերի ֆինանսավորման, և Հայաստանում ԷԱ շուկայի զարգացումը խթանելու համար:
Միջազգային / բազմակողմանի կազմակերպություններ	Եվրոպական ներդրումային բանկ (ԵՆԲ)	Ծրագրի գործընկերն ու համաֆինանսավորման աղբյուրն է:
	Համաշխարհային բանկ	Համակարգում է «Հայաստան Էներգաարդյունավետություն» ներկայիս նախագծի հետ
	ԱՄՆ ՄԶԳ/ԷԱ նախագիծ	Տվյալների փոխանակում, վերլուծական ուսումնասիրություններ
	KfW, ՎԶԵԲ, ՄԱԿ ԵՏՀ	Տվյալների փոխանակում, վերլուծական ուսումնասիրություններ և իրազեկման բարձրացման աշխատանքների համակարգում

### Շահագրգիռ կողմերի համակարգում

Շահագրգիռ կողմերի համակարգումը հիմնականում կիրականացվի Ծրագրի խորհրդի (խորհուրդ) միջոցով, որը պետական տարբեր գերատեսչությունների և այլ դոնորների աշխատանքների համակարգման համար պաշտոնական, շարունակական ֆորում կտրամադրի: Բացի խորհրդի միջոցով կատարվող աշխատանքներից, ծրագրի անձնակազմը կանոնավոր հաղորդակցության մեջ կլինի մյուս գործակալությունների հետ՝ շենքերի ԷԱ արդիականացման իրենց կոմպլիմենտար աշխատանքների առումով:



### 3.3. Գիտելիքներ

Ծրագիրը կնպաստի շուկայի բոլոր խաղացողների կողմից գիտելիքների ստեղծմանը ու փոխանակմանը: Ծրագրի ամբողջ կենսափուլի ընթացքում գիտելիքների ամրապնդումը ուշադրության կենտրոնում պահելու համար Ծրագիրը մի արդյունք է ընդգրկել՝ Արդյունք 1.2-ը, որը, մասնավորապես, վերաբերում է քաղաժ դասերի փոխանակման պլանի առկայությանը և իրականացմանը: Բացի այդ, շենքերի ոլորտին, կառավարման (ազգային և ենթազգային) մարմիններին և ՀՏ-ներին տեխնիկական օգնության տրամադրումը կհանգեցնի այդ թիրախային խմբերում կոլեկտիվ ուսումնառությանը:

## 4. ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### 4.1. Տնտեսական շահավետություն և արդյունավետություն

Այս Ծրագիրը, որն ընդգրկում է ինչպես հանրային, այնպես էլ բնակելի շենքերը, կենտրոնանում է շուկայի խոչընդոտները հաղթահարելու միջոցով ԷԱ արդիականացմանն ուղղված ներդրումների համար բարենպաստ շուկայական միջավայրի և մասշտաբավորման ընդունակ բիզնես մոդելի ստեղծման վրա:

Այդ նպատակին հասնելու խոչընդոտներից են՝ քաղաքականության, ֆինանսական, շուկայի և տեխնիկական/կարողությունների խոչընդոտները, որոնց հաղթահարման համար տեխնիկական օգնություն է անհրաժեշտ, որը տրամադրվում է 1-ին, 2-րդ և 3-րդ բաղադրիչներում: Ֆինանսական խոչընդոտների հաղթահարման համար ֆինանսավորում է անհրաժեշտ, որը տրամադրվում է 3-րդ և 4-րդ բաղադրիչներում:

ԵՆԲ-ի կողմից սահմանված սկզբունքներին համապատասխանող՝ արտոնյալ պայմաններով վարկերը կառաջարկվեն այնպիսի պայմաններով, որոնք մասնավոր կամ այլ հանրային ներդրողներին դաշտից դուրս չեն թողնի: ԵՆԲ-ը հետևում է «Մասնավոր հատվածի գործառնություններում արտոնյալ ներդրումային վարկերի օգտագործման ՕՈՒՆ ուղեցույցին»<sup>16</sup> սկզբունքներին: Այդ սկզբունքները հետևյալն են՝ հավելյալություն, մասնավոր ներդրումների ավելացում, առևտրային կայունություն, շուկաների ամրապնդում, և բարձր չափանիշներ խրախուսում: Այդ սկզբունքները, միասին վերցրած, հաստատում են ԵՆԲ հանձնառությունը տնտեսապես կայուն ծրագրերին՝ շուկային համապատասխանող աջակցություն տրամադրել այնպիսի իրավիճակներում, որտեղ մասնավոր ներդրումներ չեն սպասվում, կամ դրանք պետք է լրացնել:

Բաղադրիչ 4-ում ԿԿՀ-ի դրամաշնորհները տրամադրվելու են որպես ժամանակավոր նպատակային արտոնություններ, որոնք կհոգան ամենախոցելի տնային տնտեսությունների կարիքները: Ֆինանսական վերլուծությունը (Հավելված 17) ցույց է տալիս, որ միջին տնային տնտեսություն 400 ԱՄՆ դոլարից ցածր եկամուտ ունեցողների համար շենքի արդիականացումը մատչելի չէ: Միջին և բարձր եկամտով տնային տնտեսությունները մատչելիության տեսակետից դրամաշնորհների կարիք չունեն, և դրանք զուտ օգտագործվելու են ցածր մակարդակով վաղ մեկնարկի խոչընդոտները հաղթահարելու համար: Դրամաշնորհներն աջակցելու են աղքատ և խոցելի տնային տնտեսություններին, որը նրանց համար բարելավված ջերմային հարմարավետության և ծախսերի/էներգիայի խնայողության մատչելիություն կապահովի: Բացի այդ, զարգացած երկրներում դրամաշնորհների տեսքով արտոնությունները սովորական երևույթ են՝ ԵՄ-ում և ԱՄՆ-ում մեծ դրամաշնորհներ տրամադրելը սովորական գործելակերպ է: KfW բանկը, օրինակ, Գերմանիայում ԷԱ արդիականացման վարկերի հետ միասին նաև 7.5-22.5% խրախուսական դրամաշնորհներ է տրամադրում և, հետևաբար, Հայաստանում առաջարկվող խրախուսական դրամաշնորհը կարելի է համեմատ համարել:

Գոյություն ունեցող շենքերում ԷԱ համակարգային խոչընդոտները քաղաքականության և ֆինանսական ռիսկերի նվազեցման միջոցով հաղթահարման վրա կենտրոնանալով՝ առաջարկվող այս Ծրագիրը մի արդյունավետ և գործուն միջոց է հանդիսանում Հայաստանում ԶԳ ապագա արտանետումներով զբաղվելու և երկրի կողմից հայտարարված՝ ԱՄՄՆ-ում սահմանված մեղմման նպատակներին համապատասխանելու և քաղաքների կողմից սահմանված ենթազգային թիրախներն իրականացնելու համար: Խրախուսական ֆինանսավորում տրամադրելու միջոցով, այս Ծրագիրը նաև կլուծի *առաջին քայլի* ծախսերը և առկա բնակարանային ֆոնդի շուկայահեն վերակառուցման արագ մեկնարկի խնդիրները:

<sup>16</sup> <http://www.ebrd.com/downloads/news/roundtable.pdf>

Առաջարկվող միջոցառումների արդյունավետությունը բնութագրվում է հետևյալ առանցքային կատարողական ցուցանիշներով.

Առանցքային կատարողական ցուցանիշ	Թիրախ
մեկ տոննայի գնահատված արժեքը՝ CO <sub>2</sub> համ. (ներդրման ընդ. արժեքը/ուղղակի արտանետումների կրճատման սպասվող կենսափուլը)	<ul style="list-style-type: none"> <li>• 22 ԱՄՆ \$ / տCO<sub>2</sub>համ Ծրագրի ամբողջ ֆինանսավորման համար</li> <li>• 14.4 ԱՄՆ \$/ տCO<sub>2</sub>համ ԿԿՀ ֆինանսավորման համար</li> </ul>
մեկ տոննայի գնահատված արժեքը՝ CO <sub>2</sub> համ. (ներդրման ընդ. արժեքը/ուղղակի և անուղղակի արտանետումների կրճատման սպասվող կենսափուլը)	<ul style="list-style-type: none"> <li>• 5-6 ԱՄՆ \$ / տCO<sub>2</sub>համ Ծրագրի ամբողջ ֆինանսավորման համար</li> <li>• 3.4-3.6 ԱՄՆ \$/ տCO<sub>2</sub>համ ԿԿՀ ֆինանսավորման համար</li> </ul>

Ընդհանուր ներդրումային արժեքի/ուղղակի արտանետումների կրճատումների սպասվող կենսափուլի համապատասխան ելակետային նիշը ներկայացված է Արևմտյան Բալկաններում բնակելի շենքերի ԷԱ արդիականացման մասին վերջերս կատարված հաշվետվության մեջ բերված տվյալներում:<sup>17</sup> Ալբանիայում, որի էլեկտրաէներգետիկ համակարգի ցանցերից արտանետումների գործակիցը նման է Հայաստանի գործակիցին, արտանետումների խնայողության կենսափուլի ընթացքում մեկ տոննայի հաշվարկված արժեքը տատանվում է 178-ից 897 ԱՄՆ դոլար./տCO<sub>2</sub>համ. միջակայքում՝ կախված շենքի տեսակից ու դիտարկված միջոցառումների տեսակից:

## 4.2. Ռիսկերի կառավարում

Տեխնիկական և գործառնական ռիսկերի շարքին են դասվում գիտելիքների և հմտությունների բացակայության ռիսկերը, և ԷԾՄԸ շուկայի թերզարգացած բնույթը: Ֆինանսական ռիսկերի շարքից են այն ռիսկերը, որոնք առնչվում են էներգիայի գների մակարդակին և ԷԱ ներդրումների համար վարկերի առկայությանը: Ծրագրի սոցիալական և բնապահպանական ռիսկերն աննշան են: Մի լրացուցիչ ռիսկ էլ վերաբերում է օրենսդրություն ընդունելու և իրականացնելու կառավարության հանձնառությունը: Առավել զգալի ռիսկերը ֆինանսական ռիսկերն են: Դրանք կմեղմացվեն Ծրագրի մասը կազմող՝ ֆինանսական մեխանիզմների ստեղծման միջոցով:

## 4.3. Սոցիալական և բնապահպանական երաշխիքներ

Շենքերի ԷԱ արդիականացման ներդրումների նպաստավոր միջավայր ստեղծելու համար Ծրագիրը կհաղթահարի քաղաքականության, ֆինանսական, շուկայի և տեխնիկական խոչընդոտները: ԿԿՀ տեխնիկական աջակցությունից եկող միջամտությունները հիմնականում կարողությունների հզորացման համար են: ԿԿՀ կողմից 14 մլն ԱՄՆ դոլարի ներդրումը կազմում է ընդհանուր ներդրումային արժեքի (122,82 մլն դոլար) մոտ 11% -ը, կամ ԵՆԲ-ի 86,25 մլն դոլարի պոտենցիալ զուգահեռ մասնակցության մոտ 16% -ը: Շենքերի արդիականացումից կարող են հետևանքներ առաջանալ, ինչպիսիք են թափոնների զոյացումը և տեղադրման և ապամոնտաժման ժամանակ համայնքի անվտանգության ռիսկերը, սակայն դրանք նվազագույն են, ժամանակավոր, և կարող են հեշտությամբ մեղմվել:

<sup>17</sup> [https://www.energy-community.org/portal/page/portal/ENC\\_HOME/CALENDAR/Other\\_Meetings/2015/03\\_Jun\\_and\\_https://www.energy-community.org/portal/page/portal/ENC\\_HOME/DOCS/3284024/Guidance\\_Note\\_on\\_Residential\\_Energy\\_Efficiency\\_programs.pdf](https://www.energy-community.org/portal/page/portal/ENC_HOME/CALENDAR/Other_Meetings/2015/03_Jun_and_https://www.energy-community.org/portal/page/portal/ENC_HOME/DOCS/3284024/Guidance_Note_on_Residential_Energy_Efficiency_programs.pdf)

Շենքերի ոլորտում էներգիայի սպառման կրճատումը և դրան առնչվող ՋԳ արտանետումների կրճատումը և կարողությունների հզորացման, ֆինանսավորման և զբաղվածության մեջ գենդերային ներգրավվածության լայն հնարավորությունները (մոտ 1700 աշխատատեղ կստեղծվի) Ծրագրի ընդհանուր ձեռքբերումը կլինի:

Ծրագիրն ավարտել է ՄԱԶԾ սոցիալական և բնապահպանական հետազոտության ընթացակարգը (տես՝ ՍԲՀԸ, կցված է որպես Հավելված 5): Հետազոտությունը ձեռնարկվել է ՄԱԶԾ-ի սոցիալական և բնապահպանական չափանիշներին այս Ծրագրի համապատասխանությունն ապահովել համար: Ընդհանուր առմամբ այս Ծրագրի սոցիալական և բնապահպանական ռիսկի կատեգորիան գնահատվել է **ցածր**:

#### **4.4. Կայունություն և մասշտաբավորում**

Ծրագրի երկարաժամկետ կայունությունը ներկառուցված է հենց Ծրագրի նախագծում, որի նպատակն է հաղթահարել համակարգային խոչընդոտները և ԷԱ ներդրումների համար շուկայական պայմաններ ստեղծել՝ դրանով արագացնել ազդեցությունները ԿԿՀ ֆինանսավորման ավարտից հետո: ԷԱ ներդրումների համար կայուն շուկայի հնարավորություններ կստեղծվեն հետևյալի միջոցով.

- Բաղադրիչ 2-ի շրջանակում քաղաքականություն կարիքների բավարարում. Հանրային և մասնավոր հատվածի ներդրումների առաջ ծառայած օրենսդրական խոչընդոտներ կլուծվեն ազգային, ենթազգային տեղական կառավարման մարմինների մակարդակներում, և կլուծվեն տեխնիկական և կարողությունների խոչընդոտները:
- Բաղադրիչ 3-ի շրջանակում ֆինանսավորման կարիքների բավարարում. Ծրագիրը պայմանավորվածություններ ձեռք կբերի շենքերի ԷԱ վերականգնմանը մատչելի՝ երկարաժամկետ և կայուն ֆինանսավորում տրամադրման համար, ինչը համապատասխանում է այդպիսի ներդրումների ռիսկ-շահույթ պատկերին: Դա կարվի տեղական բանկերի և ԷՄՄԸ-ների կողմից գիտելիքների ու փորձի կուտակման միջոցով:
- Բաղադրիչ 4-ում նախատեսված ֆինանսական արտոնությունների միջոցով նախնական ներդրումների արագացում՝ որը շուկայի համար որպես խթան կծառայի, տեղական բանկերի և վարկառուների մակարդակներում առաջնահերթ խոչընդոտների հաղթահարում: Ներդրումների կրիտիկական զանգվածի աճեցման միջոցով գործնական փորձ և նոու-հաու կստեղծվի՝ դրանով իսկ լուծելով այդ համակարգային խոչընդոտները: Բնակելի շենքերի դեպքում, որտեղ արտոնությունները նպատակաուղղված կլինեն խոցելի տնային տնտեսությունների վրա, Ծրագիրը կաշխատի գոյություն ունեցող Հայաստանի Հանրապետության ընտանեկան նպաստների համակարգի միջոցով: Հետևելով այս մոտեցմանը՝ Ծրագիրը կցուցադրի, թե ինչպես կարելի է վերջերս էներգիայի գների բարձրացման դիմաց անապահով տնային տնտեսություններին փոխհատուցելու համար ներկայիս պետական ֆինանսավորումը վերահասցեագրել դեպի էներգիայի խնայողությունը: Եվ վերջում, քաղաքականության ռիսկերի նվազեցման միջոցառումներն ուղղված կլինի կայուն պետական ֆինանսավորում հաստատելու վրա այնտեղ, որտեղ աղքատության մեջ ապրող տնային տնտեսությունների կարիքները հոգալու համար նման արտոնությունների կարիքը կշարունակի մնալ որպես երկարաժամկետ միջոց:

#### **4.5. Տնտեսագիտական և/կամ ֆինանսական վերլուծություն**

Ծրագիրը կարագացնի շենքերի ԷԱ արդիականացման շուկան. ա) բնակելի հատվածում, և բ) հանրային հատվածում: Բնակելի հատվածում դիտարկվում են շենքերի երկու տիպային մոդելներ՝ առանձնատուն և բազմաթիվ սեփականատերերով բնակելի շենք (ստորև տես, Գլուխ

F.2): Հանրային ոլորտում նույն շենքի համար դիտարկվում են երկու տեխնիկական սցենար՝ արդիականացում միայն պահանջարկի կողմի համար նախատեսված (էներգախնայողության) միջոցներով, և արդիականացում և՛ պահանջարկի և՛ առաջարկի կողմի (վառելիքի փոխարինում 2) միջոցառումներով:

Սկսելով ներդրումային ծախսերից և մոդելավորված էներգիայից և ֆինանսական խնայողություններից՝ շենքերի յուրաքանչյուր տեսակի համար մի վարից վեր ֆինանսական և տնտեսական մոդել է մշակվել: Վառելիքի գները (բնական գազ և էլեկտրաէներգիայի) ամեն տարի ավելացել են 1-ական տոկոսով: Սա պահպանողական թիվ է. մինչև վերջին հրապարակային բողոքների բռնկումը, կառավարությունը նախատեսում էր միայն 2015թ-ին էլեկտրաէներգիայի սակագները բարձրացնել 16% -ով: Ներդրումային կառուցվածքի մեջ ներառվում են սեփական միջոցները (10% բնակելի շենքերում և 20% հանրային շենքում), խրախուսական դրամաշնորհները և վարկը, և այդ պարամետրերն արդեն ենթարկվել է զգայունության վերլուծություն: Պարզ հետգնումը, ներքին շահութաբերության նորմը (ՆՇՆ) և զուտ բերված արժեքը (ԶԲԱ) որոշվում են ստանդարտ ֆինանսական մոդելավորման միջոցով:

ԿԿՀ 20 մլն ԱՄՆ դոլարի դրամաշնորհը բաղկացած կլինի շենքերի ԷԱ արդիականացման շուկայի և քաղաքականություն խոչընդոտները հաղթահարելու նպատակով տեխնիկական օգնության համար տրամադրվող ֆինանսավորումից (Բաղադրիչներ 1, 2 և 3), և շենքերի ԷԱ արդիականացման վարկերն ավելի մատչելի դարձնելու միջոցով խոցելի տնային տնտեսությունների կարիքները հոգալու արտոնությունների համար (Բաղադրիչ 4):

1, 2 և 3 բաղադրիչներում նախատեսվող տեխնիկական օգնությանը ֆինանսավորվելու է դրամաշնորհի միջոցով, քանի որ դրանք զբաղվելու և հեռացնելու են համակարգային ռիսկերը և հաղթահարելու են շուկայի խոչընդոտները:

Բաղադրիչ 4-ում ԿԿՀ-ի դրամաշնորհները տրամադրվելու են որպես **ժամանակավոր նպատակային արտոնություններ**: Դրանք կօգտագործվեն խոցելի տնային տնտեսություններին թիրախավորելու համար: Դրամաշնորհներն աջակցելու են աղքատ և խոցելի տնային տնտեսություններին, որը նրանց համար բարելավված ջերմային հարմարավետության և ծախսերի/էներգիայի խնայողության մատչելիություն կապահովի: Զարգացած երկրներում դրամաշնորհների տեսքով արտոնությունները սովորական երևույթ են՝ ԵՄ-ում և ԱՄՆ-ում մեծ դրամաշնորհներ տրամադրելը սովորական գործելակերպ է: <sup>18</sup> Գերմանիայում, օրինակ, KfW բանկը ԷԱ արդիականացման վարկերի հետ միասին նաև 7.5-22.5%<sup>19</sup> խրախուսական դրամաշնորհներ է տրամադրում և, հետևաբար, Հայաստանում առաջարկվող խրախուսական դրամաշնորհը կարելի է համեստ համարել: **Բնակելի հարվածի** խոցելի տնային տնտեսություններին աջակցելու համար ընդհանուր առմամբ 12.5 մլն ԱՄՆ դոլարի խրախուսական դրամաշնորհներ կտրամադրվեն:

